ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 1 (1601) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 19, 2013
VOLUME 33, NO. 1 (1601) SATURDAY, JANUARY 19, 2013

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԼԱՒԱԾ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԻՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ

«Ազատութեան Տուն» (Freedom House) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը 2013-ի իր տարեկան զեկոյցին մէջ հերթական անգամ Հայաստանը նկատած է «մասամբ ազատ» երկիր:

Զեկոյցին մէջ կը նշուի, որ Հայաստանի մէջ քաղաքական իրաւունքներու վարկանիշը բարելաւուած է՝ 2012 թուականի Մայիսին կայացած խորհրդարանական ընտրութիւններէն յետոյ բռնութիւններու բացակայութեան, ինչպէս նաեւ ընդդիմադիր կուսակցութիւններու խորհրդարան մտնելուն շնորհիւ:

Հայաստանը քաղաքական իրաւունքներու վարկանիշով ստացած է 7 կէտի վրայ 5, ինչպէս նաեւ 4 կէտ քաղաքացիական իրաւունքներու ոլորտէն ներս:

Յայտնենք, որ «մասամբ ազատ» երկիրներ ճանչցուած են նաեւ Վրաստանն ու Թուրքիան, իսկ Ատրպէյճան, Իրան ու Ռուսաստան ճանչցուած են «ոչ ազատ» երկիրներ:

Զեկոյցի «վիճելի տարածքներ» բաժինին մէջ ներառուած է նաեւ Լեռնային Ղարաբաղը, որ բարելաւած է քաղաքական իրաւունքներու իր վարկանիշը (5 կէտ) եւ նոյնպէս ունի «մասամբ ազատ» երկրի կարգավիճակ:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԽԻՍՏ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ պաշտպանութեան նախարարութենէն ներս

Պաշտպանութեան նախարարութենէն ներս տեղի ունեցած է Հայաստանի իշխանական ընդլայնուած հաւաք, որու ընթացքին ելոյթ ունենալով Սերժ Սարգսեան բաւական հետաքրքրական «զգուշացումներ» ուղղած է Թուրքիային:

«Խօսելով Ատրպէյճանի մասին, չպէտք է մոռանանք, որ տարածաշրջանում կայ մի պետութիւն, որն անվերապահօրէն սատարում է Պաքուի հակահայ քաղաքականութեանը: «Մէկ ազգ, երկու պետութիւն» կարգախօսին տակ ձեւաւորուած Թուրք-ատրպէյճանական տանդէմը շուրջ քսան տարի շարունակ փորձում է շրջափակման, բաժանարար գծերի խորացման եւ համագործակցութեան բացառման միջոցով Հայաստանից միակողմանի զիջումներ կորզել: Դա նրանց չի յաջողուել եւ չի յաջողուելու:

«Որպէս խաղաղասէր, առաջադէմ եւ հեռատես ժողովուրդ, մենք գիտակցում ենք մեր տարածաշրջանում փոխվստահութեան մթնոլորտի ձեւաւորման կարեւորութիւնը հարեւանների հետ խաղաղ գոյակցելու եւ բնականոն զարգացման ճանապարհով ընթանալու համար: Հենց այս ամէնի գիտակցմամբ էլ մենք նախաձեռնեցինք Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը: Բոլորն են տեղեակ, թէ ինչպիսի ճակատագրի արժանացաւ այն, եւ ինչ պայմաններում Թուրքիան հետ կանգնեց իր ստանձնած պարտաւորութիւններից՝ շարունակելով զմռսուած պահել Եւրոպայի միակ փակ սահմանը:

«Այսօր Թուրքիան արագ զարգացող եւ մեծ առաջընթաց արձանագրող պետութիւն է, բայց այդ ընթացքը միշտ թերի է լինելու, եւ կանխատեսելի է դրա դրամատիկ ընդհատումը, եթէ Թուրքիայի իշխանութիւնը լրջօրէն չվերանայի

Շար.ը էջ 4

ՄԵՔՍԻՔԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԱԾ Է ՄԻՋԱՄՏԵԼ ԱԼԻԵՎԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐՑԻՆ

Մեքսիքայի դաշնակցային ընդհանուր վարչական դատարանը մերժած է Ատրպէյճանի դեսպանատան բողոքը, որու միջոցաւ փորձ կը կատարուէր պաշտպանել Ատրպէյճանի նախկին նախագահ Հէյտար Ալիեւի յուշարձանը՝ հնարաւոր տեղափոխումէ:

Յուշարձանը գետեղուած էր մայրաքաղաք Մեքսիքոյի կեդրոնական հրապարակին վրայ, անցեալ տարուայ ամռան: Այդ առթիւ հաղորդուած էր, որ հրապարակի վերակառուցման համար Ատրպէյճան ծախսած է մօտ 5 միլիոն տոլար:

Մայրաքաղաքի ղեկավարութիւնը Ալիեւի յուշարձանի տեղափոխման հարցի քննարկման համար յանձնաժողով կազմած էր, քանի որ յուշարձանը քաղաքի բնակիչներուն մօտ բողոքի բուռն ալիք յառաջացուցած էր: Յանձնաժողովը Մեքսիքոյի իշխանութիւններուն խորհուրդ տուած է Հէյտար Ալիեւի յուշարձանը տեղափոխել մէկ այլ վայր՝ փողոցի ճարտարապետական ծանրաբեռնուածութեան պատճառաւ:

Ատրպէյճանի դեսպանութիւնը հանդէս եկած է Ալիեւի յուշարձանի տեղափոխման դէմ: Դեսպանատունը յայտարարած է,

Ատրպէյճանի նախկին նախագահ Հէյտար Ալիեւի արձանը՝ Մեքսիքոյի մէջ

որ յուշարձանը կանգնեցուած է տեղական իշխանութիւններու եւ ատրպէյճանական դեսպանութեան համաձայնութեամբ եւ որ, այդ համաձայնութիւնը պէտք է պահպանուի: Հակառակ պարագային Ատրպէյճան սպառնացած է դադրեցնել Մեքսիքայի տնտեսութեան մէջ ներդրումներ ընելը եւ փակել դեսպանութիւնը:

Յայտնենք որ, երկու ստորադաս դատարաններ եւս մերժած էին Ատրպէյճանի դեսպանատան բողոքը, որմէ ետք է որ հարցը հասած էր դաշնակցային դատարան:

ՊԱՔՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԱԾ Է ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐՈՒ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամեդեարով յայտարած է որ, պաշտօնական Պաքուն մտահոգուած է եւ ուշադրութիւն կը դարձնէ Ղարաբաղի մէջ սուրիահայերու բնակեցման հարցին:

«Մենք այս հարցը բարձրացուցած ենք նաեւ ԵԱՀԿ-ի Մինսկի խումբին մօտ եւ ընդգծած ենք, որ այս անօրինական քայլ է: Վերաբնակուողներու թիւը կրնայ եւ մեծ չըլլալ, բայց, ամէն պարագային, մենք ուշադրութեան կը դարձնենք այս հարցին», - ըսած է Ազերի նախարարը:

Մամեդեարով անդրադարձած է նաեւ Ստեփանակերտի օդանաւակայանի հարցին եւ պնդած է, թէ Պաքուն դէմ չէ օդանաւակայանի վերագործարկման, եթէ այդ դառնայ խաղաղութեան համաձայնագրի կէտերէն մէկը:

«Օդանաւակայանը ինքնին խնդիրներ չստեղծեր, այն կրնայ օգտագործուիլ մարդասիրական նպատակներով, սակայն այս ամէնը պէտք է կարգաւորուի խաղաղութեան մեծ փաստաթուղթի շրջագիծէն ներս», - ըսած է Մամեդեարով:

Սուրիահայերու հարցի կապակցութեամբ Լեռնային Ղարաբաղի նախագահի խօսնակ Դաւիթ Բաբաեան «Պլումպըրկ» լրատուական գործակալութեան յայտնած է որ, Սուրիահայերը նախ եւ առաջ փախստական են, եւ անոնց ապաստան ու օգնութիւն տրամադրելը քաղաքակիրթ որեւէ պետութեան պարտքն է:

ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԼԱՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ Կ'ԱԿՆԿԱԼԵՆ

Միջազգային ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելութիւնը յոյս ունի, որ Հայաստանի Փետրուար 18-ին կայանալիք նախագահական ընտրութիւնները յաջող ընթացք կ'ունենան: Այս մասին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտարարած է դիտորդական առաքելութեան ղեկավար Հայտի Թալիաւինի:

«Ազատութիւն» ռատիոկայանի այն հարցին, թէ անցեալ տարուայ Մայիս 6-ի խորհրդարանական ընտրութիւններէն յետոյ ստեղծուած իրավիճակը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին յոյս կը ներշնչէ՞, որ յառաջիկայ նախագահական ընտրութիւնները աւելի լաւ կրնան ըլլալ, Տիկին Թալիաւինի պատասխանած է,- «Ընտրական գործընթացները դիտարկելով մենք անշուշտ միշտ յոյս ունինք, որ այդ ընտրութիւնները պիտի գերազանցեն մեր ակնկալիքները եւ պիտի ըլլան լաւագոյնը, բայց ընտրութիւնները մէկը միւսի հետ չենք համեմատեր: Յոյսով ենք, որ մեր առաքելութեան հետ արդիւնաւէտ համագործակցութիւն կը ծաւալուի եւ նախագահական ընտրութիւնները լաւ կ'ընթանան», - ըսած դիտորդական առաքելութեան ղեկավարը:

ՉՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՕԼԻԳԱՐԽԻԿ ՉԱՐԻՔԻ ՀԵՏ

ՍԱՍՈՒՆ ՔՈՍԵԱՆ

Քրէաօլիգարխիկ վարչակազմի հիմնական շարժիչ ուժը կարելի է բնութագրել այսպէս՝ փող իշխանութեան համար եւ իշխանութիւն փողի համար: Համակարգի գլխաւոր դերակատարները, կամ աւելի ճիշդ սեփականատէրերը մի խումբ օլիգարխներ են եւ նրանց մերձաւորները: Եւ նրանցից իւրաքանչիւրի հիմնական նպատակն է մեծացնել իր փայաբաժինը միւսների հաշուին, որի համար էլ անընդհատ եղել է, կայ եւ լինելու է յանցագործ աշխարհին բնորոշ բիրտ ու անմարդկային մրցակցութիւնը ազդեցութեան ոլորտների համար:

Որքան էլ որ օլիգարխիան ունեցել է ներքին մրցակցութիւն, այնուամենայնիւ նրանք միշտ էլ զգացել են արտաքին վտանգ իշխանափոխութեան ցանկացած հնարաւոր տարբերակից եւ գոնէ այդ պատճառով հանդէս են եկել միասնական դիրքերից՝ համախմբուելով ՀՀԿ-ի կամ նրա արբանեակների (ԲՀԿ - ՕԵԿ) թեւերի ներքոյ: Սակայն ներկայ ընդդիմադիր վակոյումի պայմաններում, երբ արտաքին վտանգը նուազագոյնն է, պէտք է ակնկալել օլիգարխիայի ներքին մրցակցութեան եւ զզվռտոցների ուժեղացում եւ աւելի բացայայտ ցուցադրում: Այս պայմաններում չի բացառւում, որ մաֆիայի պարագլուխը, այսինքն հանրապետութեան նախագահը, կորցնի իր ազդեցութեան լծակները օլիգարխների նկատմամբ, որից կարող է առաջանալ մի անկառավարելի իրավիճակ, երբ օլիգարխները լինելով լիակատար տէր ու տնօրէն իրենց ազդեցութեան ոլորտներում, իրար դէմ են մարտնչում, պղտոր ջրերում ձուկ են բռնում, սակայն ոչ մէկը ամբողջը չի կառավարում: Այսինքն՝ նախագահի աթոռին նստած անձ կայ ՍՍ անունով, սակայն երկիրը փաստացի ղեկավար չունի: Որքան էլ որ ներկայումս պետութիւնը վատ վիճակում է գտնւում եւ թւում է, թէ աւելի վատը չի կարող լինել, այսպիսի սցենարով այնուամենայնիւ կարող ենք յայտնուել զգալիօրէն աւելի վատթար վիճակում: Նման պարագայում, երբ երկիրը լիակատար ֆեոդալացուած եւ մասնատուած կը լինի օլիգարխների միջեւ, այլեւս անհնար կը լինի կոչուել պետութիւն այս բառի ցանկացած իմաստով: Թող սա չհնչի որպէս անտեղի տագնապ, բայց այս սցենարով երկրի լիակատար կործանումը կը դառնայ կարճ ժամանակահատուածի խնդիր:

Հասարակութիւնը պէտք է պատրաստ լինի նման իրավիճակի՝ ստեղծելով օլիգարխիայի թելադրած իրավիճակին այլընտրանք: Այլընտրանքը դա սեփական ճակատագիրը տնօրինելու նախաձեռնութիւնն է, սեփական ուժերի նկատմամբ հաւատը եւ դրանց ապաւինելը: Անհրաժեշտ է գիտակցութեան փոփոխութիւն, որն արդէն սկսուել է ի դէմս քաղաքացիական նախաձեռնութիւնների: Այլընտրանքի կոնկրետ մարմնաւորումը պէտք է լինի այլընտրանքային իշխանական եւ դատական համակարգի ստեղծումը, եւ այլընտրանքային ընտրութիւնների միջոցով իշխանութեան ձեւաւորումը:

Այս ամէնը հնարաւոր դարձնելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է դադարել համագործակցել օլիգարխիկ չարիքի հետ թէ ուղղակի, եւ թէ անուղղակի ձեւերով: Նուազագոյնը, որը սովորական մարդ արարածը կարող է եւ պէտք է անի, պէտք է ամէն քայլափոխի չհանդուրժի օլիգարխիական համակարգը եւ չենթարկուի դրա թելադրանքին: Օլիգարխիան մենք ինքներս ենք ստեղծել հանդուրժելով այն, ինչ մեզ թելադրել է հասարակութեան տականքը եւ այդպէս դարձել օլիգարխ: Հասկանանք նաեւ, որ «օլիգարխիա»-ն մի բառ է, որը մենք շռայլօրէն ենք օգտագործում մեր յանցագործ, փողատէր թափթփուկներին բնութագրելու համար:

Մենք գործ չունենք դասական ռոքֆելլերների հետ, որոնք խորամանկ, ագահ եւ ճարպիկ ձեռնարկատէրեր էին եւ ինչ-ինչ օրէնքներ շրջանցելով եւ օլիգոպոլիայի դիրքերից գործելով դարձել էին խոշորագոյն մագնատներ: Մենք նոյնպէս գործ չունենք ժամանակակից համաշխարհային բանկային օլիգարխների հետ, որոնք հարստահարում են նուրբ, արտաքինից անտեսանելի եւ բարդ ֆինանսական կառավարման սխեմաներով: Մեր «օլիգարխները» շատ աւելի պրիմիտիւ, կիսագրագէտ, յանցագործ կամ կիսայանցագործ էակներ են, որոնք հարստացել են առանց յատուկ ֆինտուֆլյուշկաների, բոլորի աչքի առաջ՝ պարզ ու հասարակ թալանով ու այլ յանցաւոր մեթոդներով: Հարստացել են կոռումպացուած իշխանութիւնների հովանաւորութեամբ, յաճախ իրենց գործընկերներին եւ աշխատողներին «քցելով»: Եւ այդ ամէնը բացայայտ լկտիութեամբ եւ հասարակական արժէքների արհամարհանքով: Լաւ հասկանանք ու գիտակցենք, թէ ինչպիսի տգրուկներ ենք ստեղծել ի դէմս հայկական օլիգարխիայի, եւ դադարենք նրանց մեր հանդուրժողականութեամբ եւ չարիքի նկատմամբ անտարբերութեամբ:

Իւրաքանչիւր անձ թող ինքը գիտակցի, թէ իր մասնաւոր կեանքում ինչ ձեւով պէտք է չհանդուրժի օլիգարխիային՝ լինի դա իշխանութեան ներկայացուցչի օրինազանցութիւնը չհանդուրժելով, թէ կոնկրետ օլիգարխի ու նրա մանկլաւիկների բեսպրեդելին դիմակայելով, թէ օլիգարխի արտադրանքը բոյկոտելով, թէ մի այլ կերպ: Սակայն մի բան յստակ է ով որ ընտրակաշառք է վերցնում նա ստրուկ է եւ մնում է օլիգարխիկ տգրուկին: Առաջին հերթին պէտք է դադարեցնել այս խիստ արատաւոր երեւոյթը:

Ժամանակը սուղ է եւ իրավիճակը բարդ: Բաւական է մասնակցել օլիգարխիկ համակարգի խաղերին, ժամանակն է ճակատագիրը վերցնել սեփական ձեռքերում: Երբ այս արատաւոր համակարգը կը փլուզուի, այն կը փոխարինուի ժողովրդավարական հասարակութեան կամքով, իտէալներով եւ ջանքերով ստեղծուած համակարգով: Իսկ այդ այլընտրանքային համակարգը դեռ պէտք է ստեղծել:

Այսօրուայ փոքրաթիւ քաղաքացիական նախաձեռնութիւններին յաջողուել է հասնել չափա-

Շար.ը էջ 18

ԼՍԻ՛Ր ՀՀԿ, ՀԱՅ ԿԱՆԱՆՑԻՑ ՀԵՌՈՒ ՄՆԱ

ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

Կառավարման ոլորտում բոլոր տեսակի բարեփոխումները ձախողելուց յետոյ իշխող ՀՀԿ-ն հիմա էլ որոշել է հայ կանանց ուղղուած բարոյախրատական ճառերով զբաղուել:

ՀՀԿ-ն հրատարակել է մի գիրք, որը վերնագրուած է այսպէս՝ «Հայ ընտանիք (խնդիրներ եւ հարցադրումներ)»: Մէջբերում յիշեալ «գրքոյկից». «Հայ իգական սեռը նախ մայր է, կին, ապա նոր միայն՝ գիտնական, բժիշկ, պատգամաւոր, բանւորուհի, մանկավարժ, գիւղատնտեսութեան աշխատող, գործարար, հասարակական կամ քաղաքական գործիչ եւ այլն: Հայ իգական սեռը նախ բարոյական արժէք է, ապա նոր միայն՝ ֆիզիքական մարմին՝ իր բնախօսական պահանջներով: Հայ իգական սեռը նախ հայ է, ապա նոր միայն՝ կին: Այս ճշմարտութիւնների չգիտակցումը կը տանի հայ կնոջ, հետեւաբար եւ հայ հասարակութեան այլասերմանը, եւ, ի վերջոյ՝ կործանմանը: Դրանք պէտք է կանխել հենց սկզբից՝ պայքարելով հայ կնոջն «ազատագրելու» օտարամուտ ամենատարբեր դրսեւորումների, հայկական միջավայրում սեռական աղանդաւորութեան դէմ»: Այնուհետեւ անարգանքի սիւնին է գամւում կործանարար Արեւմուտքը՝ հայ կնոջ կերպարի խեղաթիւրման եւ ընտանիքի քայքայման համար:

Իրականում, եթէ ՀՀԿ-ն գոնէ մի քիչ բարոյականութիւն եւ տղամարդկութիւն ունենար գաւառամիտ խրատների փոխարէն՝ ներողութիւն կը խնդրէր հայ կնոջից: Այն հայ կնոջից, ում ՀՀԿ-ն, լինելով իշխանական կուսակցութիւն, պարգեւել է տառապալից կեանքի եւ հոգսաշատ առօրեայի անվերջանալի շղթայ: Ո՞վ է իրաւունք տուել ՀՀԿ-ին փիլիսոփայական բարբաջանքներ հնչեցնել այն հայ կնոջ հասցէին, ում ամուսինը մի կտոր հացի համար թափառում է օտար երկրներում՝ դաւաճանելով իր կնոջն ու ի վերջոյ լքելով նրան ու քայքայելով ընտանիքը: Ո՞վ է ՀՀԿ-ն, որ ինչ-որ բան ասի այն հայ տատիկին, ով արցախեան ազատամարտում զոհուած իր որդու երեխաներին պահելու համար ստիպուած է շուկայում կիտրոն եւ կանաչի վաճառել, իսկ իր որդու արդէն օրիորդացող դուստրը աստուածային հրճուանքով պիտի սպասի, թէ երբ են «Լֆիկ Սամոյի» սուպերմարկետից հերթական տոպրակն ուղարկելու իրենց տուն. սա՞ է ՀՀԿ-ի պատկերացրած աւանդական հայ կնոջ արժանապատիւ կեանքը:

Այդ նոյն ՀՀԿ-ն գիտի՞, որ այսօր հայ կինը տղամարդուն հաւասար, եթէ ոչ աւելի, ստիպուած է կրել ընտանիքի կեցութեան ծանրութիւնը, ՀՀԿ-ն երբեւէ մտածե՛լ է, թէ հայ կնոջ աչքում որքա՞ն է արժեզրկւում այն հայ տղամարդը, ով չի կարողանում իր ընտանիքի նուազագոյն պահանջները բաւարարել, թէ՝ ՀՀԿ-ի համար իսկական հայ տղամարդը նա է, ով Երեւանի փողոցներում «Ջիփերի ռեյդ» է անում եւ տարին մի քանի անգամ սիրուհիների հետ հանգստանում էկզոտիկ երկրներում: Տեսե՛լ է ՀՀԿ-ն, թէ ինչպէ՛ս է հայ կինը քարշ տալիս մածուններ բանկաները շէնքից-շէնք, որպէսզի տանը պարապ նստած ամուսնու եւ որդու համար ծխախոտ ու սուրճ առնի կամ գոնէ գիտի՝ ՀՀԿ-ն, թէ քանի նորաստեղծ ընտանիքներ են քայքայուել սոցիալական խնդիրների պատճառով: ՀՀԿ-ն տեղեակ չէ՝, որ այդ նոյն ապրելու հրամայականը 15 տարեկան աղջնակին տանում է փողոց՝ որոշակի ծառայութիւններ մատուցելու, այդ թւում նաեւ սեռական աղանդաւորութեամբ զբաղուելու, ինչից, ի դէպ, սիրով օգտւում են նաեւ մի շարք բարձրաշխարհիկ ՀՀԿ-ական այրեր /հարազատ կուսակցութեան հրատարակած գրքոյկը, յուսանք, նրանք էլ կը կրադան/: Կամ մի՞թէ հայ տղամարդու թուլութեան հետեւանքը չէ, որ հայ կինը յայտնւում է Թուրքիայի կամ Արաբական Էմիրութիւնների էժանագին օբիեկտներում:

Եւ ուրեմն՝ խորհուրդ ՀՀԿ-ին. եթէ ուզում էք, որ հայ կինը մնայ իր բարձունքում, նախ եւ առաջ ուժեղացրէք հայ տղամարդուն: Պէտք չէ հանճարեղ լինել հասկանալու համար, որ ինչպէս ցանկացած կին, այնպէս էլ հայ կինը լիարժէք է միայն լիարժէք, ինքնավստահ եւ ապահով տղամարդու կողքին: Եւ վերջապէս, պարոնա՛յք ՀՀԿ-ականներ. ուշադիր նայէք, թէ ովքե՛ր են Ձեր կուսակցութեան շարքերում առաջընթաց ապրած կանայք, նրանք ի՞նչ աղերս ունեն հայ կնոջ աւանդական բարոյականութեան հետ: Եւ ուրեմն՝ բարի եղեք նախեւառաջ դառնալ նորմալ իշխանաւոր, պահել արժանապատիւ երկիր, կարող էք չկասկածել՝ եթէ դուք որպէս իշխանաւոր ձեր տեղում լինէք, հայ կինն էլ իր բարձունքին կը լինի:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԻԱՒՈՐՈՒՄԸ ՀՆԱՐԱՒՈՐ Է 2-ՐԴ ՓՈՒԼԻ ԴԷՊՔՈՒՄ»

ՀՀ նախագահի թեկնածու, «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Ռաֆֆի Յովհաննիսեանի լիազօր ներկայացուցիչ Արմէն Մարտիրոսեանը փետրուարի 18-ին կայանալիք նախագահական ընտրութիւններում ընդդիմադիր թեկնածուների միասնական ճակատով հանդէս գալը հնարաւոր է համարում երկրորդ փուլ լինելու պարագայում:

«Ես հասկանում եմ այդ մօտեցումը, որ միասնական ընդդիմադիր թեկնածու են ուզում, եւ դրա ժամանակը հնարաւոր եմ համարում երկրորդ փուլի պարագայում, այնպէս որ պէտք է սպասել զարգացումներին»,- Tert.am-ի զրոյցում ասաց Արմէն Մարտիրոսեանը:

«Ազգային համաձայնութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Յարութիւնեանի յայտարարութիւնը, թէ Ռաֆֆի Յովհաննիսեանը իշխանութեան թեկնածու է, Արմէն Մարտիրոսեանի համար ծանօթ իրավիճակ է:

«Նմանատիպ գործընթացներ շատ են եղել, եւ համոզուած եմ, որ հասարակութիւնը տարբերում է, որ դա ընդամէնը մրցակցին սեւացնելու գործընթաց է եւ ոչ աւելին»,- ասաց նա:

««Ժառանգութեանը» եւ Ռաֆֆի Յովհաննիսեանի հասցէին տարիներ շարունակ տարբեր ժամանակաշրջանում շանտաժային բառեր են ասել, որից յետոյ պարզ է դարձել, թէ ով է իսկապէս իշխանութեան թեկնածուն եւ ինչու համար էր իր թեկնածութիւնը դրել կամ ում դէմ էր իր թեկնածութիւնը դրել»,- աւելացրեց «Ժառանգութեան» նախկին պատգամաւորը:

Ռաֆֆի Յովհաննիսեանի լիազօր ներկայացուցիչ Արմէն Մարտիրոսեան

Արմէն Մարտիրոսեանը հրաժարուեց քարոզարշաւի հետ կապուած այս պահին որեւէ բան ասել: «Քանի որ քարոզարշաւը չի սկսել, ուստի նպատակայարմար չէ, եւ յետոյ ամէն ինչ դեռ որոշուած էլ չէ: Տակտիկական քայլերից որոշ հանգամանքներ քարոզարշաւի հենց մեկնարկից արդէն ձեզ պարզ կը դառնան»,- եզրափակեց նա:

ՀՀԿ-Ն ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ՀՐԱԺԱՐՈՒԵԼ ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔՆԵՐԻՑ

Հայաստանի հանրապետական կուսակցութեան համակարգում աշխատող մարդիկ պէտք է հետ վարժուեն ընտրողներին կաշառելուց: Այս մասին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց ՀՀԿ-ական պատգամաւոր Յովհաննէս Սահակեանը:

Այդուհանդերձ, կաշառքը դժուար ապացուցելի խախտում է: «Ես ինքս ծագումով Սպիտակից եմ եւ այնտեղ մենք խորհրդարանական ընտրութիւններից առաջ բաւական նորմալ քարոզարշաւ ենք անցկացրել: Այդ տարածաշրջանում ոչ ոք չի կարող ընտրակաշառքի դէպք մատնանշել»,-ասաց Յ. Սահակեանը: Միաժամանակ, նրա խօսքով, նմանատիպ դէպքեր արձանագրուել են մի շարք այլ շրջաններում, սակայն աւելի շուտ հակառակ արդիւնքն են ունեցել՝ բացասաբար անդրադառնալով այն թեկնածուների վարկանիշի վրայ, ովքեր փորձել են դրանք բաժանել:

ՀՀԿ-ական պատգամաւորը վստահեցրեց, որ առաջիկայ նախագահական ընտրութիւնները կ՚անցկացուեն որակապէս նոր մակարդակով: «Նրանք, ովքեր կը փորձեն ապօրինի կերպով ստուեր գցել ընտրութիւնների վրայ, պատասխան կը տան օրէնքի առջեւ: Եթէ մամուլին յայտնի դառնան նմանատիպ խախտումների մասին, մենք ուրախ կը լինենք, եթէ մեզ յայտնէք դրանց մասին: Իսկ ընտրութիւններից յետոյ, եթէ ոմանք չցանկանան հաշտուել նոր ստանդարտներին, նոր որակի մարդկային տեսակին, ստիպուած կը լինեն ընտրել՝ կամ խորապէս աշխատել իրենց վրայ, կամ լքել մեր շարքերը»,-յայտարարեց Սահակեանը:

Յիշեցնենք, որ Հայաստանում նախագահական ընտրութիւնները տեղի կունենան 2013 թուականի փետրուարի 18-ին: Հայաստանի ԿԸՅ-ն գրանցել է նախագահի 8 թեկնածուների:

ԹԵԿՆԱԾՈՒՆ ՀԱՇՈՒԱՐԿԵԼ Է, ՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ 35 ՏՈԿՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԷ

Նախագահի թեկնածու, ԼՂ նախկին արտգործնախարար Արման Մելիքեանի հաշուարկներով, ընտրողների հրապարակուած թիւի առնուազն 35 տոկոսը Հայաստանում չէ: Մելիքեանը հրապարակեց Կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչեանին ուղղուած նամակը՝ առաջարկելով իր աջակցութիւնը, որպէսզի հրապարակուի Հայաստանից հեռացած, ինչպէս նաեւ Հայաստանի քաղաքացիութիւն ստացած, սակայն այստեղ չբնակուող քաղաքացիների թուաքանակը:

Այս քայլերը ձեռնարկւում են այն նպատակով, որպէսզի պարզ լինի, թէ իրականում Հայաստանում ձայնի իրաւունք ունեցող քանի մարդ է մնացել: Եւ դրանից ելնելով մենք պէտք է ճշդենք, թէ որքանով են լինելու պաշտօնական տուեալները ճշմարտացի», - տեղեկացրեց նախագահի թեկնածուն:

Արման Մելիքեանի հաշուարկներով, ընտրողների հրապարակուած թիւի առնուազն 35 տոկոսը Հայաստանում չէ, ուստի, ըստ նախագահի թեկնածուի, ընտրութիւնների իրաւաչափութիւնը որոշուելու է միայն քուէարկութեան օրը:

ՔՈՉԱՐԵԱՆԸ ՄԱՏՆԱՆՇՈՒՄ Է ԻՐ ՉԱՌԱՋԱԴՐՈՒԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ռոբերդ Քոչարեանը յայտարարել է, թէ երեք պատճառ կայ, որոնք դրդում են իրեն ձեռնպահ մնալ ակտիւ քաղաքականութիւն վերադառնալուց:

«Մեդիամաքս» լրատուական գործակալութեան հրապարակած հարցազրոյցում Քոչարեանը, արձագանքելով հարցին, թէ իր՝ նախագահական ընտրութիւններին մասնակցելու առումով որոշակի սպասումներ կայ՝ն, սակայն դա տեղի չունեցաւ, որո՞նք էին այդ որոշման դրդապատճառները, ասել է, - «Երեք հիմնական հանգամանք կ՚առանձնացնեմ:

Առաջինը՝ իշխանութեան պայքարը երկու ղարաբաղցիների, երկու վաղեմի գործընկերների միջեւ ինձ համար անընդունելի էր. այն բարդ ընտրութեան իրավիճակ կը ստեղծէր շատերի համար ու կը դառնար տարատեսակ շահարկումների առարկայ: Բացի այդ, ինքս եմ ժամանակին առաջարկել գործող նախագահին որպէս յաջորդողի, եւ վերընտրուելու նրա ցանկութիւնը հասկանալի է:

Երկրորդը՝ չէի ցանկանում մասնակցել իշխանութեան պայքար մղող երեք նախագահների ծայրայեղ տհաճ եւ, վստահ եմ, երկրի համար վնասակար ձեւաչափի կազմաւորմանը:

Եւ երրորդը: Քաղաքական կոմպրոմիսի փնտռտուքը Հայաստանում փոխակերպուել է մանրածախ քաղաքական առեւտրի: Իսկ դա ամենեւին էլ այն չէ, ինչի համար ես կ՚ուզենայի ծախսել ժամանակս, գիտելիքներս ու փորձս»:

Ռոբերդ Քոչարեանը նաեւ քննադատութեան է ենթարկել Հայաստանի ներկայիս իշխանութիւններին, նշելով, թէ երկրից բնակչութեան արտահոսքը շարունակւում է, տնտեսութիւնը 2012-ի արդիւնքում էլ չի հասնի նախաճգնաժամային մակարդակին, իսկ քաղաքական մրցակցութիւնն էլ «տիկնիկային» է դարձել:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԿԵՂՃՈՒԵՆ... ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ

Քաղաքագէտ Արմէն Բաղալեան

Քաղաքական, տեխնոլոգիաների փորձագէտ Արմէն Բաղալեանը վստահ է, որ փետրուարի 18-ին Սերժ Սարգսեանը չի վերընտրուելու: Նրա կարծիքով՝ Սերժ Սարգսեանը եւս հինգ տարով կը զբաղեցնի նոյն պաշտօնը՝ հմուտ թուանկարչութեան արդիւնքում:

«Այն պահին, երբ պարզ դարձաւ, որ Գագիկ Ծառուկեանը եւ Լեւոն Տէր-Պետրոսեանը չեն մասնակցելու ընտրութիւններին, հենց այդ պահից էլ պարզ դարձաւ, որ ընտրութիւնները դեռ չսկսուած, փաստացի աւարտուել են, եւ մենք ունենք էպոսագետին յաղթած նախագահ», - լրագրողների հետ հանդիպմանն ասաց Բաղալեանը:

Նրա ձեւակերպմամբ՝ «Փետրուարեան թուանկարչութեանը» չորս թիւ է կեղծուելու: Նախ՝ կեղծուելու են քուէարկութեան մասնակցութեան տուեալները: Ըստ քաղտեխնոլոգի, եթէ ազդեցիկ ուժերն ընտրութիւններին չեն մասնակցում, դժուար կը լինի մասնակցութեան մեծ տոկոս ապահովել:

«Մի մասը գիտակցուած կը գնայ, գործող նախագահին ձայն կը տայ՝ հանրապետական շրջանակները, գործարարները: Մնացածների մասով գիւղապետերին «պետպատուերով» ցուցակ կ՚ի՛ջեցուի՝ «գիւղում գրանցուած այս 300 մարդուց ընտրութիւններին պիտի գրես, որ մասնակցել են, մօտաւորապէս, 210 հոգի: Ձայներն էլ էսենց կը բաժանէս՝ էսքանը գործող նախագահին, երկրորդը տեղի մարդուն այսքան տոկոս, մնացածներին մի բան կամ կը գրէս, կամ չես գրի», - քուէարկութեան՝ իր սցենարը ներկայացրեց Արմէն Բաղալեանը:

Բացի դրանից, ըստ նրա, քանի որ ներկայ պայմաններում ընտրութիւններով հետաքրքրուած մարդկանց շրջանում Սերժ Սարգսեանի վարկանիշը բաւական բարձր է, եւրոպացի գործընկերների մօտ մրցակցային ընտրութիւնների տպաւորութիւն թողելու համար իշխանութիւնները ստիպուած են լինելու նուազեցնել Սարգսեանի օգտին տրուած ձայների ցուցանիշը:

«Չի կարելի հանդուրժել, որ Սարգսեանն ընտրուի 85-90 տոկոսով, դրա համար, նրան տրուած ձայների թիւն արհեստականօրէն իջեցուելու է՝ միւս թեկնածուների ցուցանիշներն աւելացնելու հաշուին», - նշեց Արմէն Բաղալեանը:

«ՀՐԱՊԱՐԱԿ». ԲՀԿ-ԱԿԱՆՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՍԱՀՈՒՆ ԱՆՑԵԼ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ՍԱՏԱՐԵԼՈՒՆ

«Հրապարակը» գրում է. «Որոշ գնահատականներով՝ Գագիկ Ծառուկեանն անկումային տրամադրութեան մէջ է, ընտրութիւններին չմասնակցելու իր յայտարարութիւնից յետոյ չի հանդիպել կուսակիցներին, չի ասել, թէ ինչ պէտք է անեն առաջիկայում:

Ընդ որում՝ կուսակցութեան անդամների մի մասը սահուն ինտեգրուել է Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը տեղերում պաշտպանելու սուրբ գործին: Ինչ վերաբերում է կուսակցութեան արմատական հատուածին, ապա վերջինս չի կորցնում յոյսը, որ դեռ ինչ-որ բան հնարաւոր է փրկել՝ անգամ նախագահական ընտրութիւններից յետոյ:

ԲՀԿ արմատական թեւի մի ներկայացուցիչ մասնաւոր զրոյցներից մէկի ժամանակ ասել է, որ իրենք չեն բացառում, որ Գագիկ Ծառուկեանը դուրս կը գայ քաղաքականութիւնից, եւ կուսակցութիւնը կ՚անցնի «իրենց իմացած մարդուն»՝ Ռոբերդ Քոչարեանին: Ընդ որում ԲՀԿ-ն յամառօրէն հերքում է այս լուրերը, եւ ոմանք դա բացառում են, քանի որ «Սերժ Սարգսեանը չի համաձայնի»:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՒԱՆԸ ԵՒՐԱՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՒՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ

Հայաստանի իշխանութիւնները հակադրութիւն չեն տեսնում արտաքին քաղաքականութեան ոլորտում Եւրամիութիւն եւ Եւրասիական միութեան կամ Ռուսաստանի հետ համագործակցութեան հարցում:

2012թ.-ի Դեկտեմբերի 17-ին Բրիւսելում Հայաստանի ու Եւրամիութեան միջեւ ստորագրուեց վիզաների դիւրացման մասին համաձայնագիրը: Միւս կողմից, վերջին շրջանում շատ է խօսւում Ռուսաստանի գլխաւորութեամբ Եւրասիական միութեան ստեղծման մասին, եւ այդ համատեքստում Երեւանում չեն դադարում քննարկումները, թէ ի վերջոյ ո՞ր ուղղութեամբ պէտք է ընթանայ Հայաստանը՝ դէպի Եւրամիութիւն, թէ՞ Եւրասիական միութիւն:

«Ռուսաստանը եղել եւ մնում է մեր հիմնական ռազմաքաղաքական գործընկերը, եւ մենք այդ յարաբերութիւնը պէտք է խորացնենք, եւ այդ յարաբերութիւնը չպէտք է հակադրենք Եւրամիութեանը», լրագրողների հետ հանդիպմանը պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին յայտարարեց Հայաստանի Ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղար, կոալիցիոն «Օրինաց երկիր» կուսակցութեան առաջնորդ Արթուր Բաղդասարեանը, - «Մենք դա ազնիւ բացատրում ենք մեր գործընկերներին: Երկու կողմի հետ այսօր շատ լաւ ստացւում է, եւ մենք պէտք է շարունակենք այդ համագործակցութիւնը: Այդ համագործակցութիւնը ուղղուած չէ ոչ իրար դէմ, ոչ էլ երրորդ կողմի դէմ»:

Արթուր Բաղդասարեանը «բաւականին օգտակար» որակեց Ռուսաստանի հետ համագործակցութիւնը, տեղեկացնելով, որ աւարտուել է հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցութեան մասին նոր համաձայնագրի մշակումը, որի ստորագրումը թոյլ կը տայ Հայաստանի ու Ռուսաստանի ռազմաարդիւնաբերական համալիրի ձեռնարկութիւններին «ուղիղ կապերի մէջ մտնել եւ

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարեան

խորացնել համագործակցութիւնը»: Բաղդասարեանը նաեւ նշեց, որ Հայաստանում բացուել է ռուսական «Ռոսգրանիցա» պետական գործակալութեան ներկայացուցչութիւնը եւ նախատեսւում է ռուսական ռեսուրսների ներգրաւմամբ արդիականացնել հայ-թուրքական եւ հայ-իրանական սահմանները:

Ըստ ԱԱԽ քարտուղարի, այս տարի՝ ՀԱՊԿ անդամ երկրներից առաջինը Հայաստանում կը բացուի ՀԱՊԿ ակադեմիան, ուր կը պատրաստուեն ռազմական, անվտանգութեան ոլորտում կադրեր:

Եւ վերջապէս, ինչպէս փոխանցեց Բաղդասարեանը, 2013-ին Հայաստանում ստեղծուելու են նիւթատեխնիկական պահուստի հայ-ռուսական համատեղ ենթակառուցուածքներ «ողջ կովկասեան տարածաշրջանի համար»:

«Դա խոշորագոյն ենթակառուցուածք է լինելու, որի ստեղծումը մեր տնտեսութեան, անվտանգութեան համար էլ ունի կարեւորագոյն նշանակութիւն: Տեղակայուած լինելով Հայաստանում՝ այդ պահուստները կարող են Ռուսաստանի եւ Հայաստանի կարիքների համար օգտագործուել: Խօսքը հիմնականում քաղաքացիական նշանակութեան պահուստների մասին է», - մանրամասնեց ԱԱԽ քարտուղարը:

ԵՄԱ-Ն ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի զանգուածային լրատուամիջոցները նախագահի հնարաւոր թեկնածուների նկատմամբ խտրականութիւն եւ բացայայտ կողմնակալ վերաբերմունք չեն դրսեւորել: Յունուար 16-ին այս մասին տեղեկացրեց Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը՝ ներկայացնելով 2013 թուականի նախագահական ընտրութիւնների նախընտրական քարոզչութեանը նախորդող ժամանակահատուածում՝ 2012 թուականի Հոկտեմբերի 1-ից մինչեւ Դեկտեմբերի 15-ը, Հայաստանի հեռարձակող լրատուամիջոցների մշտադիտարկման արդիւնքները:

Նաւասարդեանի խօսքով, սակայն, չի կարելի ասել, որ ԶԼՄ-ները ընտրողին պատշաճ կերպով օգնել են կողմնորոշուել:

«Հեռարձակուող լրատուամիջոցների ուշադրութիւնը ինչ-որ տեղ վատնուել էր այն քաղաքական գործիչների եւ ուժերի նկատմամբ, որոնք ի վերջոյ որեւէ ակնյայտ կամ պարզ դերակատարութիւն չունեն այս նախագահական ընտրութիւնների ժամանակ: Խօսքը ,Բարգաւաճ Հայաստան», Հայ ազգային կոնգրէս եւ Դաշնակցութիւն կուսակցութիւնների մասին է», - մեկնաբանեց ԵՄԱ նախագահը:

Հետազօտութեան համաձայն, առաջադրուած 8 թեկնածուներն արժանացել են լրատուամիջոցների ուշադրութեան միայն 40 տոկոսին: Ընդ որում, լուսաբանման ժամանակ ուշադրութիւնը ծրագրերի եւ գաղափարների վրայ չէր, այլ առաջադրուել-չառաջադրուելու, առանձին կամ միասնական թեկնածուով հանդէս գալու հարցերի շուրջ էր:

«Այսինքն, բովանդակային որեւէ բան, որը կարող էր հետք թողնել նախընտրական քարոզչութեան վրայ, այդպիսի բովանդակութիւն մենք չենք տեսել», - այս առնչութեամբ ասաց Բորիս Նաւասարդեանը:

Նկատելով, որ առաջին փուլի մշտադիտարկման ընթացքում գործադիր իշխանութեան ներկայացուցիչները աւելի մեծ ուշադրութեան են արժանացել լրատուամիջոցների կողմից, քան բոլոր քաղաքական կուսակցութիւնները միասին վերցուած, Բորիս Նաւասարդեանը կարծիք յայտնեց, որ իշխանութեան ներկայացուցիչները գոնէ Յունուարի 21-ից՝ քարոզարշաւի մեկնարկից, պէտք է հնարաւորինս սահմանափակեն իրենց ակտիւութիւնը հանրային կեանքում, որպէսզի չստացուի այնպէս, որ իշխանութիւնը ներկայացնող թեկնածուն եւ նրան սատարող քաղաքական ուժը մեծ առաւելութիւն ունի:

Մամուլի ակումբը մշտական կապ է ունենալու 8 թեկնածուների շտաբերի հետ՝ պարզելու չունե՞ն արդեօք դժգոհութիւններ ԶԼՄ-ների աշխատանքից: Մէկ թեկնածուի դժգոհութիւն արդէն լսել են՝ խօսքը նախագահի թեկնածու Արամ Յարութիւնեանի մասին է:

«Մենք անպայման կը ստուգենք եւ կը ներկայացնենք, իրո՞ք այդ թեկնածուի նկատմամբ ինչ-որ յատուկ քաղաքականութիւն է վարւում: Յամենայնդէպս, մենք մինչ այսօր դա չենք նկատել», - նշեց Նաւասարդեանը:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԽԻՍՏ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

իր վերաբերմունքը իր պետութեան եւ ժողովրդի պատմութեանը: Այն այսօր էլ լրջօրէն վտանգուած է, քանի որ Թուրքիան կրկնում է իր իսկ պատմութեան սխալները»,- Ըստ է Հայաստանի նախագահը:

Խօսելով Ցեղասպանութեան հարցի մասին Սերժ Սարգսեան ըսած է,- Հայոց ցեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը Թուրքիայի պարտքն է ցեղասպանութեան զոհերի, վերապրածների ու նրանց ժառանգների, համայն մարդկութեան, բայց առաջին հերթին՝ իր իսկ ժողովրդի առջեւ: Այսօր Թուրքիայի ժողովուրդը, թէեւ դանդաղ, բայց կասկածի տակ է դնում տասնամեակներ շարունակ թուրքական իշխանութիւնների մատուցած շինծու վարկածը, իսկ թուրքական հասարակութեան առաւել առաջադէմ ու համարձակ հատուածը բարձրաձայն խօսում է Հայոց ցեղասպանութեան մասին:

«Հայաստանի Հանրապետութեան համար Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը սոսկ արդարութեան եւ արդարադատութեան պահանջ չէ կամ նախնիների առջեւ ունեցած բարոյական պարտքի կատարում, այն ունի նաեւ անվտանգութեան նշանակութիւն: Կարծում եմ՝ առանց Թուրքիայի անկեղծ ապաշխարանքի եւ Ցեղասպանութեան հետեւանքների վերացման, տարածաշրջանում Հայաստանի ապահով գոյութիւնը շարունակելու է մնալ վտանգուած»,- յայտարարած է Սարգսեան:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ 33 ՏՈԿՈՍ Է

Gallup-ը հարցումներ է իրականացրել 148 երկրներում, 2010-ի համեմատութեամբ ինտերնետ հասանելիութիւնն աշխարհում աճել է 3 տոկոսով:

Հայաստանում 2011-ին հարցուածների 33 տոկոսն է ասել, որ տանն ինտերնետ ունի:

Զնայած Հայաստանը ցուցակի վերին հատուածում չէ, այնուամենայնիւ, Հարաւային Կովկասում ինտերնետ հասանելիութեամբ առաջատար է. Վրաստանում միայն 29 տոկոսն է պատասխանել, որ ինտերնետն իրենց համար հասանելի է, իսկ Ադրբեջանում՝ հարցուածների 15 տոկոսը:

Հարեւան Թուրքիան եւ Իրանը ինտերնետ հասանելիութեամբ գերազանցում են Հայաստանին. ըստ Gallup-ի՝ Իրանում՝ 38, իսկ Թուրքիայում՝ հարցուածների 40 տոկոսն է ասել, թէ տանն ինտերնետը հասանելի է:

Հարցման համաձայն՝ 148 երկրներից 41-ում ինտերնետ կապը մեծ խնդիր է, այդ երկրներում հարցուածների մինչեւ 10 տոկոսն է ասել, որ ինտերնետն իրենց հասանելի է: Ընդ որում, Մալիում, Մադագասկարում, Բուրունդիում եւ Գվինեայում ինտերնետը խիստ հազուադէպ հանդիպող երեւոյթ է, քանի որ հարցուածների մէկ տոկոսից էլ պակասն է ասել, թէ ինտերնետ ունի:

Մինչդեռ 48 երկրում ինտերնետը 2011-ին հասանելի է եղել հարցուածների կէսից աւելի համար, իսկ 23 երկրում աւելի քան 80 տոկոսը հնարաւորութիւն է ունեցել ցանկացած պահի միանալ համաշխարհային ցանցին:

Ամենահասանելին ինտերնետը Շուեդիայում եւ Սինգապուրում է՝ հարցուածների 93 տոկոսը ասել է, որ տանն ինտերնետ ունի:

Եւրամիութեան երկրների մեծ մասը, Ամերիկայի Միացեալ Նահանգները, Իսրայէլը, Կանադան, Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Աւստրալիան, Նոր Զելանդիան եւս այն երկրների շարքում են, որ 80 տոկոս եւ բարձր ինտերնետ հասանելիութիւն ունեն:

Հայ news.am
ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՎԱՒԵՐԱՑՈՒԵԼՈՒ ՎՐԱՅ Է

Այս տարուան ընթացքին Լիբանանի մէջ տեղի ունենալիք Երեսփոխանական ընտրութեանց կապակցութեամբ կազմուած ընտրական նոր օրէնքի բարեփոխման յանձնախումբն իր աշխատանքներն աւարտած է: Այս կապակցութեամբ երկրի տարբեր համայնքներն ու քաղաքական կազմակերպութիւններն ունին զիրար հակասող վիճելի առաջարկներ: Միւս կողմէ Լիբանանի յառաջդիմական սոցիալիստ կուսակցութեան նախագահ՝ Ուալիտ Ճումպլաթ, այս առնչութեամբ յայտարարութիւն մը կատարելով շեշտեց, թէ՝ պէտք է յարգուին ԹԱՒՖի մէջ գոյացած համաձայնագրի պայմանները եւ ժամը հասած է լիբանանցիները միացնելու ընտրական օրէնքի մը շուրջ:

Միւս կողմէ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան ընտրական օրէնքի քննարկումները արծարծող հաղորդագրութեան մը մէջ ցաւ յայտնեց որ Յոյն ուղղափառ հանդիպումի օրինագիծը կ'արժանանայ մեծ հետաքրքրութեան եւ խոր քննարկումներու: «Թէեւ օրինագիծը կը յարմարի Հնչակեան Կուսակցութեան, որովհետեւ կը կանխարգիլէ այլ համայնքներու ազդեցութիւնը՝ հայ համայնքին վրայ, սակայն ան մերժելի է՝ մեկնելով լիբանանեան նկատառումներէ, որովհետեւ դուռ կրնայ բանալ համայնքային նոր բախումներու», ըսաւ Ընկ. Գալփաքեան:

Պետական Երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան

Անոր խօսքով, մինչ աշխատանք կը տարուի երկիրը ձերբազատելու ընտանիքներու եւ համայնքներու քաղաքական ազդեցութենէն, ուղղափառ օրինագիծի որդեգրումը դուռ կը բանայ յարանուանական ու ծայրայեղական քարոզարշաւի, որուն կրնան դիմել կուսակցութիւններ ու համայնքներ, ապահովելու համար քաղաքական կէտեր, Լիբանանը վերադարձնելով անցեալի մութ հանգրուանին:

Կը կարծուի թէ Լիբանանի Հանրապետութեան նախագահ՝ Միշէլ Սլէյման պիտի առաջարկէ նախկին նախարար Ֆուատ Պութրոսի 1960 թուականին մշակած ընտրական ծրագիրը:

ՊՈԼՍՈՅ ՀԱՅԵՐՈՒՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ԱՂԷՏԵԱԼՆԵՐՈՒՆ

Hurriyet Daily News թերթի համաձայն Պոլսոյ հայ գաղութը սուրիահայ գաղութի աղէտեալներուն օգնութեան զոյգ արշաւներ կազմակերպած է: Առաջին օգնութեան արշաւի նախաձեռնողն է՝ Tower Travel օդանաւային ընկերութեան սեփականատէր՝ Տիգրան Ալթունի կինը՝ Շնորհիկ Ալթուն: Երկրորդի նախաձեռնողն է Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանը: Իսկ Թուրքիոյ Կարմիր Մահիկ Ընկերակցութիւնը ստանձնած է Պատրիարքարանի կողմէ հաւաքուած օգնութեան բաշխումը:

Դրամական աջակցութիւն ցարդ չէ ընդունուած, քանի որ նախաձեռնութիւնը քաղաքացիներու կողմէ է: Օգնութեան նպատակն է աջակցիլ Հայաստան ապաստանած բազմահազար սուրիահայերուն: Ըստ Պատրիարքարանի հաղորդագրութեան՝ ցարդ միայն հագուստեղէն հաւաքուած է:

Պողոսիչի համալսարանի դասախօսներէ՝ Արսէն Արշըքի համաձայն, հայկական «Արմենիա» օդանաւային ընկերութիւնը ցարդ 60 կապոց փոխադրած է դէպի Երեւան: Արշըք յայտնած է նաեւ, որ պոլսահայերը հոգեկան մեծ գոհունակութիւն կը զգային օգնելով արտասահմանի իրենց հայրենակիցներուն: Ան նշած է նաեւ, որ Պատրիարքարանը դրամատնային յատուկ հաշիւ մը բացած է օգնութեան այս ծրագրին համար:

«ԳՈՀԱՐ» 150,000 ՏՈԼԱՐ ԿԸ ՅԱՏԿԱՑՆԷ ՀԱՐԱՒ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ, ԻՍԿ 50,000 ՏՈԼԱՐ՝ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ

«ԳՈՀԱՐ» Սիմֆոնիք Նուագախումբի եւ Երգչախումբի հարաւամերիկեան համերգներէն գոյացած հասոյթէն մօտաւորապէս 150,000 ամերիկեան տոլար կը յատկացուի տեղւոյն մէջ գործող հայկական զանազան վարժարաններու, մշակութային եւ հասարակական ծրագիրներու, ուսուցիչներու եւ անհատներու, որոնք ԱԲԳ, մշակոյթ եւ երգ-երաժշտութիւն ջամբած են տարիներ շարունակ:

«ԳՈՀԱՐ» անսալով իր տարիներու սկզբունքին եւ հաւատալով, որ հայութիւնը պիտի շարունակէ գոյատեւել իր մշակոյթով, անգամ մը եւս իր համերգներէն գոյացած ընդհանուր գումարը նուիրեց Հայ ինքնութեան պահպանման եւ գոյատեւման ճիգերուն:

«ԳՈՀԱՐ» անդրադառնալով նաեւ Սուրիոյ մէջ տիրող ճգնաժամին, այս տօնական օրերուն, հարաւամերիկեան համերգային շրջագայութենէն զգալի գումար մը՝ 50,000 ամերիկեան տոլար կը նուիրէ սուրիահայ կարիքաւոր ընտանիքներու, որպէսզի շարունակեն իրենց տարիներու հայա-պահպանման երթը այս տագնապալի օրերուն:

«ԳՈՀԱՐ» կը շարունակէ իր նուիրաբերումը Հայ ազգային արժէքներու պահպանումին:

200,000 ՍՈՒՐԻԱՑԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Լիբանանի կառավարական պաշտօնական շրջանակներէն ստացուած լուրերուն համաձայն ներկայիս 200 հազար սուրիացի գաղթականներ Լիբանան ապաստանած են, ինչպէս նաեւ 20 հազար պաղեստինցիներ:

Եգիպտական իշխանութիւններուն համաձայն հարիւր հազար սուրիացի գաղթականներ ապաստան գտած են այս երկրին մէջ:

Յառաջիկայ օրերուն Արաբական Լիկան, արտակարգ ժողով մը պիտի գումարէ, սուրիացի գաղթականներուն անմիջական օգնութեան հարցի քննարկումին համար:

ԱՄՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՆ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՇՈՒՐՋ

Շուրջ երկու տարիէ ի վեր Սուրիոյ մէջ տեղի ունեցող քաղաքացիական կռիւներու դադարեցման եւ այս կնճռոտ հարցի լուծման համար միայն մէկ ճանապարհ կայ, որ է քաղաքական լուծում, փոխանցման շրջանի կառավարութեան մը կազմումով: Այս կէտին շուրջ իրենց համաձայնութիւնը յայտնած են Ռուսաստանն ու Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յանձնառութիւն յայտնեց Սուրիոյ հարցով ժընեւեան համաձայնութեան, որ կը պահանջէ տագնապի խաղաղ միջոցներով լուծումը: Հաղորդագրութեան մը մէջ, Մոսկուա նաեւ զօրակցութիւն յայտնեց միջազգային պատուիրակ Լախտար Իպրահիմի առաքելութեան: Նշենք, որ Իպրահիմի ձախող որակեց Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարարներու հանդիպումը, որ կայացաւ զուիցերական քաղաքին մէջ:

Վերոյիշեալ հարցի կապակցութեամբ ըստ պետական խօսնակ Վիքթորիա Նիւլանտի, ընդդիմադիրներու համախմբումը կը ծրագրէ բանագնացներ նշանակել ապահովելու համար ջուրի, էլեկտրականութեան, հիւանդանոցներու եւ հրշէջ ծառայութիւններու գործունէութիւնը:

Ռոյթըրզ լրատու գործակալութիւնը, տեղեկագրի մը մէջ հաղորդեց, որ Սուրիոյ մէջ կռուող կարգ մը ծայրայեղական զինեալներ մտադրութիւն ունին իսլամական պետութիւն հաստատելու երկրին մէջ: Տեղեկագիրը նաեւ կը նշէ, որ ընդդիմադիր ազատ բանակը կը մերժէ այդ զինեալներուն ծրագիրը:

www.massisweekly.com
updated every Friday

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**
Name: ----------
Address: ----------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: ----------
Tel :---------- Fax : ----------

ՀԱԼԷՊԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

ՍԱԿԱՒԱԹԻՒ ԳԱՂԹ ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ... ԵՒ ԻՐԵՆՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ Է ԴԻՄԱՆԱԼ

ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐԸ ԶԻՐԵՆՔ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՏՈՒՆԵՐՈՆ ՄԷՋ, ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ՕԳՆԵՆ ԻՐԵՆՑ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԱԿԱՅ Է.

Ստորեւ Արաբերէնէ թարգմանուած յօդուած մը գրուած Մայ Ապպուտ Ապի Ամբլի գրչով, որ երեւցաւ Լիբանանի անկախ եւ ազդեցիկ օրաթերթ «ԱՆՆԱՀԱՐ»-ի 2 Յունուար 2013 թիւին մէջ: Շահեկան եւ բացատրական գրութիւն մը որ գրուած է հայասէր շունչով, եւ որ արժանի է գովասանքի եւ տարածման հայ շրջանակներէ ներս:

Գրեց՝ Մայ Ապպուտ Ապի Ամբլ
Արաբերէնէ Թարգմանեց՝ Մեթր Պարգեւ Դաւիթեան

Հայկական ներկայութիւնը Սուրիոյ մէջ պատահական չէ, այլ կ'երկարի դարերու վրայ, եւ աւելի առաջ է Թուրքիոյ կողմէ անոնց դէմ գործուած ցեղասպանութենէն, որ պատահեցաւ քսաներորդ դարու սկզբնաւորութեան, երբ անոնցմէ հազարներ ստիպուեցան փախչիլ եւ ապաստանիլ Սուրիոյ մէջ: Այդ դարաւոր ներկայութեան փաստը կը կազմեն անոնց եկեղեցիներն ու բնակարանները որոնք տասնըչորրորդ եւ տասնըվեցերորդ դարերէն են: Հայոց թիւը Սուրիոյ մէջ, ըստ մարդահամարի, մօտաւորապէս հարիւր յիսուն (150,000) հազար է, որ վերջին քսան տարիներուն պակսեցաւ հասնելով հարիւր հազարի (100,000). Անոնք կը բնակին Հալէպի, Քէսապի, Քամիշլիի, Դամասկոսի եւ Պա'աքուպայի մէջ, եւ ունին իրենց սեփական դպրոցները, կեդրոնները, հաստատութիւնները, միութիւնները՝ ընկերային եւ մշակութային, մարզական ակումբները, առաւել՝ ունին իրենց ներկայացուցիչները բանակի եւ փարլամենթի մէջ, եւ իրենց կարեւոր տեղը առեւտրական, ճարտարարուեստական, տնտեսական եւ արհեստի մարզերէն ներս: Հայերը ինքզինքին կը նկատեն Սուրիոյ քաղաքացիներ, քաղաքացիական բառին ամբողջ իմաստով: Համահաւասար մակարդակով կառչած են մէկ կողմէն իրենց լեզուին եւ հայկական ազգային ինքնութեան եւ մշակոյթին, եւ միւս կողմէն՝ իրենց Սուրիոյ հպատակ եւ քաղաքացի ըլլալու իրողութեան: Անոնք դարձած են անբաժան մասը Սուրիոյ ընկերային կեանքին, եւ կ'ազդուին դրապէս թէ ժխտապէս այդ կեանքի ելեւէջներով: Ճանչցուած են որպէս իրար բռնող եւ իրար մօտ կեցող, դուցէ անոնք այդ սորվեցան իրենց պատմութենէն եւ կեանքի փորձառութենէն, հապա ինչ ըսել դժուարին դէպքերու պարագային: Ի՞նչ է իրենց պարագան Սուրիոյ ներկայ ցաւալի վիճակին տակ: Արդեօք անոնց վիճակուած է նորէ՞ն գաղթել եւ թափառիլ:

ԳՈՐԾԻ ԲԼԱՆԱՒՈՐՈՒՄ

Հայոց ներկայութիւնը Սուրիոյ մէջ կը կեդրոնանայ Հալէպի շուրջ, որ 301 թուականէն սկսեալ դարձած էր կարեւոր կեդրոն մը դէպի Երուսաղէմ ուղղուող հայ ուխտաւորներուն երբ քրիստոնէութիւնը դարձաւ Հայաստանի պետական կրօնը: Հալէպի մէջ ներկայիս կ'ապրին մօտաւորապէս ինիսուն հազար (90,000) հայեր որոնք ունին իրենց կշիռքն ու ներկայութիւնը առեւտուրի եւ ճարտարարուեստի մարզերէն ներս: Սուրիոյ դէպքերուն սկիզբէն սկսեալ, Հալէպի մէջ ժողով գումարուեցաւ որուն մասնակցեցան հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական համայնքներու պետերը, ինչպէս նաեւ հայ կուսակցութիւններու ներկայացուցիչները եւ շրջանի երեւելի հայ անձերը, կարգաւորելու համար համայնքի վիճակը, որու աւարտին համաձայնութիւն գոյացաւ հետեւեալ կէտերու շուրջ:- 1- Հայերը կողմ չեն հակամարտին մէջ եւ կը կանգնին Սուրիոյ կողքին որպէս հայրենիք եւ պետութիւն եւ կը մերժեն որեւէ կողմէ գործուած ամէն տեսակի բռնարարք եւ կը յորդորեն հեռացում համայնքային նկատառումներէ եւ համախմբում Սուրիոյ ազատութեան, անկախութեան եւ գերիշխանութեան շուրջ, եւ կը մերժեն արտաքին միջամտութիւն եւ երկրի բաժանում: 2- Բլանաւորում՝ դիմագրաւելու համար այն ինչ որ կը ծագի որպէս հետեւանք Սուրիական բանակի եւ զինեալ խմբակցութիւններու միջեւ պատահող զինուորական գործողութիւններէն:

Միւս կողմէն, ժողովի նստան Լիբանանի հայկական կուսակցութիւնները, Դաշնակը, Հնչակը եւ Ռամկավարը, հովանաւորութեամբ հոգեւոր հայրերուն հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական համայնքներուն, եւ բլանաւորեցին օգնութեան եղանակ մը որպէսզի իրենց մէջ ընդունին Սուրիահայ գաղթականները եւ անոնց մատուցեն պէտք եղած օժանդակութիւնը կրթական, առողջապահական եւ ընկերային բնագաւառներէն ներս: Տեղին է հոս յիշել թէ այն ինչ որ կը պատահի Հալէպի մէջ կը յիշեցնէ այն որ պատահեցաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին, երբ դիտումնաւոր ձեւով թիրախի արժանացան մշակոյթի կոթողներն ու պատմական վայրերը, երբ ռմբակոծուեցան բնակելի վայրերը եւ հրկիզուեցան առեւտրական շուկաները, որպէսզի ոմանք ունենան կարելիութիւնը օգտուելու վերաշինումի ծրագիրներէն եւ հարիւրաւոր միլիոն տոլարներու ֆինանսաւորումի կարելիութիւններէն:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՂԹ

Շարունակուող դէպքերը զանազանութիւն չեն դներ բնակելի վայրերու, առեւտրական շուկաներու եւ կռուի շրջաններու միջեւ, ուստի, հայկական թաղամասերը Հալէպի մէջ ռմբակոծուեցան եւ ծերանոցը փոխադրուեցաւ աւելի ապահով շրջան մը. նոյնպէս, կարգ մը դպրոցներ պարպուեցան եւ կարգ մը եկեղեցիներ աւերուեցան, եւ հայեր աւելի հայահոծ շրջաններ տեղափոխուեցան որպէսզի ինքնապաշտպանուին եւ ապահով զգան, թիկունք թիկունքի տալով: Հալէպի ինիսուն հազար հաշուող հայութիւնը, ըստ Լիբանանի ամենամեծ հայ կուսակցութեան՝ «Դաշնակ»-ի ներկայացուցիչին, միայն տասը հազար գաղթած է որուն չորս հազարը գաղթած է Լիբանան եւ վեց հազարը գաղթած է Հայաստան: Գաղթականութիւնը տեսակներ ունի:-

ՆԵՐՔԻՆ - Սուրիական քաղաքներու միջեւ ուր հայ բնակչութիւն կայ, ինչպէս Հալէպ, Տէր-Զօր, Հոմս, Լաթաքիա եւ Դամասկոս, ամէն մէկը նայած իր կարելիութիւններուն, ծանօթներուն եւ ազգականներուն:

ԱՐՏԱՔԻՆ - այսինքն դէպի Հայաստան, անոնք որոնք տակաւին բնակարան ունին, կամ հոն կը բնակէին անցեալ քսան տարուայ ընթացքին. Հայաստանի կառավարութիւնը հոն իրենց օգնեց եւ Սուրիահայ աշակերտներուն սեփական դպրոց սարքեց, եւ դասընթացքերը Սուրիոյ կրթական պահանջքին համեմատ դասաւորեց. նոյնպէս, դիւրութիւններ ընծայուեցան հալէպցի վաճառականներու, գործարանատէրերու եւ արհեստաւորներու, եւ կարգ մը խանութներ բացուեցան հոն, մանաւանդ որ Հայաստան պէտք ունի այդպիսի փորձագէտներու եւ աշխատանքի ասպարէզներու. այս բոլորին վրայ, սփիւռքահայութիւնը եւս օգնեց, եւ մարդասիրական կազմակերպութիւններ ու մարմիններ ու պետութիւններ, վերջինը Քուէյթը ըլլալով, օգնութիւն տուին Սուրիահայութեան: Ցիշատակելի է նաեւ թէ հարիւրաւոր ընտանիքներ եւ անձեր մեկնեցան Ամերիկա, Գանատա եւ Եւրոպա, մանաւանդ բարեկեցիկ ունեւորները եւ հոն ազգական կամ ծանօթ ունեցողները, եւ կամ բոլոր անոնք որոնք նախապէս հոն գաղթելու կամ այցելելու դիմում կատարած էին: Երեսփոխան Յակոբ Բագրատունի յայտնեց թէ Դաշնակցութիւնը ձեռնարկեց ոչ միայն հայերը այլ բոլոր Հալէպցիները օգնելու արշաւ մը, որ գործադրուեցաւ վերջին երեք ամսուայ ընթացքին երեք (3) օդանաւեր ղրկելով Հայաստան, եւ այնտեղէն բերելով մարդասիրական օգնութիւն դեղերու, սննդեղէնի եւ փուրթէ վերմակներու ծրարներով, զորս յանձնուեցաւ Սուրիական Կարմիր Մահիկին եւ Հալէպի Հայոց Առաջնորդարանին, եւ բաժնուեցաւ հայ թէ արաբ կարօտեալներուն անխտիր, որովհետեւ ըստ Բագրատունիի «հայերը անջատ հարց չեն»:

ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ

Լիբանան ապաստանող սուրիահայերու թիւը անցեալ մէկ տարուայ մէջ կը բաղկանայ 3500-4000 ապաստանեալ հայերէ ըստ տեղեակ աղբիւրներէ քաղուած վիճակագրութեան. ունեւորները բաժնուած են տարբեր շրջաններու մէջ պանդոկներու կամ կահաւորուած յարկաբաժիններու մէջ, ոմանք ալ կը բնակին նախապէս գնուած իրենց սեփական տուներուն մէջ. սակայն նիւթական վիճակը ապաստանեալներու մեծ մասին տկար է, եւ տեղաւորուած են որպէս հիւր իրենց ընտանեկան պարագաներու կամ ազգականներու մօտ, եւ մեծ մասամբ կը գտնուին Պուրճ Համմուտի, Անթիլիասի եւ մօտակայ շրջաններու մէջ որ արդէն բազմաբնակ շրջաններ են: Կ'ըսուի թէ ուսումնական հարցի նկատմամբ, մօտաւորապէս եօթ հարիւր (700) աշակերտ, ոմանք առանց դպրոցական փաստաթղթերու, արդէն անվճար տեղաւորուած են տեղական դպրոցներու մէջ, բարեփոխուած դասընթացքներու որդեգրութեամբ որ կը յարմարի Սուրիական պետա-

Շար.ը էջ 17



«ՀԱԼԷՊ ԿԸ ԾՆԻՆ, ՊԷՅՐՈՒԹ Կ'ԱՊՐԻՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ ԿԸ ՄԵՌՆԻՆ»

ՀՐԱՑՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Հօրս եւ իր ընկերներուն բարեկամական զրոյցներու ընթացքին արտայայտուած խօսքերէն եւ միտքերէն է...: Կիրակի կէսօրէ ետքերու մեր տան մէջ Պէյրութ՝ հայրս եւ իր բարեկամները կը զրուցէին մշակութային եւ ազգային շատ մը նիւթեր:

Բոլորն ալ հոգեպէս եւ մտքով ծանրաբեռնուած՝ ազգային մեր մտահոգութիւնները իրենց գլխաւոր օրակարգ, կը զրուցէին եւ կը վիճաբանէին...: Եթէ այս մէկն ալ իրենց մէկ նիւթերէն էր, թէկուզ քիչ մը կարօտով, բայց որուն մէջ անպայմանօրէն յուզում եւ տրտմութիւն խառնուած՝ անոնք հայուն ճնշուած եւ պարտադրուած «ճակատագիրը» կ'որոնէին...:

Եթէ մանկութեանս եւ պատանեկութեանս տարիներուն ներկայ կ'ըլլայի հօրս եւ իր բարեկամներուն հաւաքներուն, բայց նաեւ մտիկ կ'ընէի իրենց զրոյցները, եթէ նոյնիսկ ամէն ինչ չհասկնալով այդ տարիներուն՝ բայց մտքիս ու հոգիիս մէջ տեղ մը «բոյն» կը շինէին այդ բոլորը՝ երեւի որպէսզի անդրադառնամ անոնց երբ մեծնայի ու սկսէի ատակ դառնալու այդ բոլորին...:

Եւ այդպէս ալ եղաւ...: Ժամանակի ընթացքին սկսայ սորվիլ եւ հասկնալ հայուն՝ իմ պատմութիւնս...: Ցեղասպանութիւնը եւ անոր արհաւիրքը...: Հօրս եւ իր բարեկամներուն զրոյցին եւ կատակ-յուզումին բովանդակութիւնը: Թէ ինչո՞ւ համար «հայը Հալէպ կը ծնի, Պէյրութ կ'ապրի եւ Ամերիկա կը մեռնի...»: Եւ թէ հօրս պատմութիւնն ալ մէկ փոքր օղակն էր այդ կատակ-յուզումին:

Հալէպ չէր ծնած՝ եւ իր պատմութիւնը սկսած էր ատկէ առաջ...: Շատ մանուկ տարիքին, հազիւ նորածին, հայրս ծնողացը հետ Այնթապէն եկած էր Հալէպ...: Հասակ առած ու սորված էր «Երազային Հալէպի» մէջ, որմէ ետք անցած էր Պէյրութ, իր կեանքը շարունակելու...: Համալսարան, ասպարէզ, ընտանիք եւ մշակութային-երաժշտական ճոխ կենաք:

Բայց հայրս չհասաւ Ամերիկա մահանալու...: Մնաց ու մահացաւ եւ թաղուեցաւ Պէյրութի մէջ իր կատակ-յուզումը ամբողջացնելու տեսլականով...: Բայց այս տեսլականը իւրաքանչիւր հայուն «ոդիականն» է...: Ցեղասպանութիւնը ապրած, հայրենի հողն ու տունը կորսնցուցած եւ Սփիւռքի այլ գաղութները իր տուն-տունները շինած (մէկը միւսին ետեւէն, եւ թերեւս արագ-կամաց հերթականութեամբ): Ու տակաւին՝ նոյնինքն սփիւռքեան «հոս-հոն» հողերուն մէջ վերջացնելու երկրային կեանքը...: Ես պիտի հասկնայի «կատակ-յուզում»ը հօրս եւ իւրաքանչիւր հայուն, թէ ինչո՞ւ էր, որ «Հալէպ կը ծնին, Պէյրութ կ'ապրին ու Ամերիկա կը մեռնին...»:

Բայց եւ այնպէս կեանքը շարունակուեցաւ ու տակաւին...:

Մէկ կողմէ անհատական, միւս կողմէ ընտանեկան ու տակաւին ազգային-միութենական եւ եկեղեցական, հոս թէ հոն, մէկ գաղութէն միւսը, հայը շինեց ու շարունակեց ապրիլ-վերապրիլ, որովհետեւ հաւատաց մէկ գերագոյն իրականութեան, ազգապահպանումին...:

Եւ թէ Հալէպ ծնաւ կամ այլ՝ հայը առաւ այդ երկրին դրոշմը, կնիքը ու նկարագիրը՝ շինեց ու շէնցուց: Եւ թէ անցաւ Պէյրութ կամ այլ՝ դարձեալ ըրաւ նոյնը...: Ու եթէ տակաւին Ամերիկա կամ ուրիշը՝ դարձեալ նոյնն է, որ կը շարունակուի՝ ազգապահպանումի եւ հայապահպանումի տեսլականը: Եւ այս տեսլականը անգամ մը եւս ապրեցայ 18 Հոկտեմվեր 2012ին՝ Նիւ Եորքի Սրվոց Նահատակաց Ազգային վարժարանին մէջ...:

75 հայ մանուկներ եւ պատանիներ: Մանկամսուր, մանկապարտէզ եւ նախակրթարան եւ մինչեւ 6րդ դասարան: Խումբ մը նուիրեալ հայ ուսուցիչներ եւ Զարմինէ Պողոսեանը տնօրէնուհի...: Նիւ Եորքի նման այս հսկայ քաղաքին մէջ, ուր կեանքը ու անոր յառաջացուցած «հեւքը» քեզ կրնայ մինչեւ իսկ շնչահեղձ ընել՝ շատ հաւանաբար կը փորձուիս մտածելու եւ ըսելու. «Ինչո՞ւ համար է այս փոքրիկ հայկական վարժարանը այս հսկայ քաղաքին մէջ...»:

Զարմինէն եկած էր Հալէպէն...: Իրեն համար հայակերտումը եւ ինքնութեան պահպանումը

վեր է ամէն զոհողութենէ եւ սակարկումներէն...: Հալէպի ազգային շունչով մեծցած ու դաստի արակուած՝ ան կը շարունակէ նոյն ուժգնութեամբ եւ խանդավառութեամբ նոր սերունդ «հայ» մեծցնել...: Եւ հայուն սփիւռքեան կեանքի երթն է այս...: Զարմինէն Նիւ Եորքի մէջ նաեւ կ'ապրի Հալէպի սէրը՝ եւ այսօր նաեւ ռմբակոծումը, ժողովուրդին վախը, իր ապրած փողոցներուն հրկիզումը...:

Եթէ աչքերուն մէջ կայ կարօտ, բայց նաեւ զսպուած արցունք, քանի Հալէպը որպէս ծննդավայր կարեւոր հիմք է իր կեանքին...:

«Ամուսինս եւ ես կը մտածէինք Հալէպ վերադառնալ հանգստեան կոչուելէն ետք...»: Զարմինէին «Երազային Հալէպին» իրականացող -չիրականացող երազն է այս...:

Երբ կը մտնեմ փոքր դպրոցի տարբեր դասարանները, կը փորձուիմ հարց տալ ես ինծի թէ արդեօ՞ք Սրբոց Նահատակաց Ազ-

Շար.ը էջ 18

ՊԱՏԻՒՍ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՑ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ներկայ թղթակցութեան վերնագիրը ինքնին կը բացայայտէ նախաձեռնուած ձեռնարկին գնահատելի բնոյթը, որ կը յատկանշուի երախտագիտութեամբ, գնահատութեամբ եւ բարեգոյն մաղթանքներով: Անոնք, արդարօրէն կը հասցէագրուին անձի մը, որ լուռ ու մունջ, իր նիւթա-բարոյական մշտատեւ ներդրումներով սատար կը հանդիսանայ Լարք Երաժշտական Ընկերակցութեան , որպէսի կարենայ իրեն վստահուած խոստումնալից սան-սանուհիները պատրաստել դէպի ապագայ առաջնորդող որակաւոր երաժիշտներ:

Տաղանդաշատ երաժշտագէտ խմբավար՝ Տնօրէն Վաչէ Պարսումեանի գլխաւորած Լարք Երաժշտական Ընկերակցութեան նախաձեռնութեամբ եւ Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանին հովանաւորութեան տակ դրուած ձեռնարկն էր ան արդարեւ, որ տեղի ունեցաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց տաճարին մէջ, 23 Դեկտեմբեր 20012ին, Պըրպէնք, երաժշտասէր հոծ բազմութեան մը ներկայութեան:

Տէր եւ Տիկ. ճէրի եւ Փաթրիշիա Թրբանճեան բարերար ամոլին նուիրուած ներկայ ձեռնարկի յայտագրին իրենց մասնակցութիւնը կը բերէին, առանձնապէս Լարքի Երաժշտական ընկերակցութեան խոստումնալից մատղաշ տարիքէ մինչեւ պատանեկան հասակի սան-սանուհիները: Անոնք, առանձինն ու հաւաքականօրէն ունեցած արտասանական, երգի ու երաժշտական այլասեռ գործիքներու վրայ վարժ եւ ընդունակ կատարողութիւններով կու գային արդարացնելու իրենց ծնողներուն, նուիրեալ ուսուցիչներուն եւ երախտաշատ բարերարներուն բարոյական ու նիւթական մշտատեւ ներդրումները: Անոնք, իրենց ունեցած իւրաքանչիւր տաղ ու երգի եւ լար ու ստեղի վրայ վարժ կատարողութեան մէջ յանձնառութիւն կար կարծես վաղուան հայուն փառքը հիւսելու կոչուած հայ երաժիշտները դառնալու, ինչ որ Լարքի Տնօրէն Վաչէ Պարսումեան պիտի գար հաստատելու, իրապէս, թէ՝«...այսօրուան յայտագրի կատարողութիւնը կ՛արտայայտէ այն, որ Լարքի աշակերտները կը պատրաստուին դառնալու վաղուան առաջնորդ երաժիշտները»:

Գեղարուեստական յայտագրի աւարտին՝ հերթը եկած էր Տէր եւ Տիկ. ճէրի եւ Փաթրիշի Թրբանճեան բարերար ամոլը արժանաւոր կերպով պատուելու սրտառուչ պահը: Իրենց գնահատական, շնորհակալական եւ երախտագիտական ելոյթներով հանդէս եկան Էնտի Թորոսեան, Լարք Երաժշտական Ընկերակցութեան տնօրէն Վաչէ Պարսումեան եւ փոխ տնօրէնուհի Թագուհի Արզումանեան:

Իր շնորհակալական ելոյթին մէջ Տիկ. Արզումանեան իր խօսքը ուղղելով Թրբանճեան բարերարին, պիտի գար հաստատելու, թէ ան, Լարքի դժուարին օրերուն, ուժ է տուած իրենց՝ հաւատալու լոյսին, յուսադրած զիրենք՝ դէպի ելքի կարելիութիւններուն, զինած է զիրենք կամքով՝ լաւատեսութեամբ նայելու լուսածագին:

Վաչէ Պարսումեան, իր մեծարանքի խօսքին մէջ բարձրօրէն պիտի ողջունէր Տէր եւ Տիկ. Թրբանճեանները, յայտնելով, որ նման անձնաւորութիւններ ունենալով իրենց շուրջ՝ օրհնուած են իրենք: Անոնց ներկայութիւնը եւ հովանաւորութիւնը հոգեպէս կը հարստացնեն զիրենք:

Այնուհետեւ Լարք Երաժշտական Ընկերակցութեան հոգաբարձու անձնակազմի հրաւէրով բեմ հրաւիրուեցան բարերարներ՝ Թրբանճեան ամոլը, որ իբրեւ բարեգործ բարերարներ, պարգեւատրուեցան Սրբ. Ներսէս Շնորհալի շքանշաններով, ներկաներու լիաբուռն ծափահարութիւններուն ներքեւ:

Այս երախտաշատ, շնորհակալ եւ գնահատանքի ուրոյն հանդիսութեան աւարտին, իր սրտի խօսքով հանդէս եկաւ Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան, որ խորապէս գնահատեց բարերարներ Թրբանճեան ամոլի՝ հայ մշակոյթին եւ եկեղեցւոյն հանդէպ ցուցաբերած ծառայութեան ոգին, շնորհաւորեց անոնց պարգեւատրումը Սրբ. Ներսէս Շնորհալի շքանշաններով եւ մաղթեց ամենայն բարիք:

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը, իր հերթին, կը գնահատէ Լարք Երաժշտական Ընկերակցութեան մեծարանքի օրուան բովանդակալից նախաձեռնութիւնը, նաեւ՝ կը շնորհաւորէ Թրբանճեան ամոլը, Սրբ. Ներսէս Շնորհալի շքանշաններով , արժանաւորապէս պարգեւատրուելուն ուրախ առիթով:

HayastanInfo.net

«ՄՈԳԵՐԸ ՀԱՅ ԷԻՆ»

Նոր Սերունդ Մշակութային Միութեան այս տարուան անդրանիկ միջոցառումը տեղի ունեցաւ Հինգշաբթի Յունուար 3, 2013, երեկոյեան ժամը 8ին, Փասատինայի ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ:

Ընտրանի հասարակութիւն մը ներկայ էր սրահէն ներս, ունկնդրելու դոկտ. Յովհաննէս Ահմարանեանը, իր նոր հրատարակած «Մոգերը Հայ Էին» շահեկան գիրքի մասին:

Օրուան հանդիսավար՝ ՆՍՄՄ-ի վարչութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան, իր բացման խօսքին մէջ հանգամանօրէն ներկայացուց ծանօթ մանկավարժ եւ գրող դոկտ. Յովհաննէս Ահմարանեանի կրթա-մշակութային գործունէութիւնը եւ յատկապէս իր նոր աշխատասիրութիւնը Սուրբ Գիրքի մէջ յիշատակուած երեք մոգերու մասին:

Իր ելոյթին մէջ դոկտ. Յ. Ահմարանեան բացայայտեց իր նորագոյն գիրքի բովանդակութիւնը, Քրիստոսի ծննդեան առթիւ Արեւելքէն եկած երեք մոգերու ազգութեան մասին: Ան նախ խօսեցաւ մոգերու ինքնութեան մասին եւ իր պրպտումներուն իբրեւ արդիւնք՝ կը հետեւցնէ, թէ անոնք թագաւորներ էին՝ Մելգոն, Գասպար եւ Պաղտասար: Իսկ արտայայտուելով մոգերը առաջնորդող աստղին մասին՝ յարգելի զեկուցաբերը պատկերաւոր տուեալներով ընդգծեց՝ որ «Բեթլեհեմի Աստղը Հայաստանէն ճամբայ ելած էր Յուդայի երկիրը երթալու»:



Դոկտ. Յ. Ահմարանեան բազմաթիւ աղբիւրներ ուսումնասիրելէ ետք, փաստացի մէջբերումներով եզրակացուց որ Աստուածաշունչի մէջ նշուած մոգերը հայ էին:

Շահեկան դասախօսութեան աւարտին տեղի ունեցաւ կարծիքներու աշխոյժ փոխանակութիւն եւ հիւրասիրութիւն:

Յառաջիկայի լոյս տեսնելու վրայ են հեղինակի այլ գործերը:

ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴՈԿՏ. ՅԱՍՄԻԿ ԽԱԼԱՓԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

UCLA-ի Նարեկացիի Անուան Հայագիտութեան Ամպիոնի Բարեկամներու Ընկերակցութիւնը, որ Համալսարանի կողմէ ճանչցուած է որպէս կապ Հարաւային Գալիֆորնիայի Հայ համայնքի հետ, ուրախութեամբ կը տեղեկացնէ յառաջիկայ դասախօսական երեկոյին մասին, զոր պիտի ներկայացնէ Դոկտ. Յասմիկ Խալափեան, այժմ այցելու դասախօս UCLA-ի Միջին Արեւելեան Լեզուներու եւ Մշակոյթներու բաժանմունքէն ներս՝ նիւթ ունենալով «Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող հայերու կրթական եւ բարեսիրական գործունէութեան փիլիսոփայութիւնն ու քաղաքականութիւնը եւ անոնց ազդեցութիւնը կանանց հասարակական կեանքէն ներս ունեցած մասնակցութեան վրայ (1876-1914):

Դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Յունուար 27ին, ժամը 4:00ին, Կլենտէյլի Հանրային Գրադարանին մէջ:

Դոկտ. Խալափեան կը դասախօսէ Երեւանի Պետական Համալսարանի Հոգեբանութեան բաժանմունքէն ներս, ուր կ՛ուսուցանէ Ընկերաբանութիւն եւ Ընկերային Տեսութիւն, Միջանձնային եւ Միջմշակութային Հաղորդակցութիւն, ինչպէս նաեւ Գենդերային (Gender) Հոգեբանութիւն: 2009էն մինչեւ օրս ան համատեղ տնօրէնն է ՀԲՄ-ի Համացանցային Քոլէճի (AGBU Vietual College) 1 Անգլիական ու ֆրանսական լեզուաբանութեան մէջ ստանալէ ետք իր Արուեստից Պակաւոր (BA) եւ Արուեստից Մագիստրոսի (MA) աստիճանները, Խալափեան կ՛ուսումնասիրէ անգլիական գրականութիւնը Օհայօ Նահանգի Օքսֆորտ քաղաքի Մայամիի Համալսարանէն ներս՝ ստանալով իր երկրորդ Մագիստրոսականը, որմէ ետք դոկտորականը կը շարունակէ Պուտափեշտի հռչակուած Եւրոպայի Կեդրոնական Համալսարանէն ներս՝ հետազօտելով հայ կանանց կարգավիճակն ու դերը Օսմանեան կայսրութեան մէջ: Իր ուսումնասիրութեանց ընթացքին ան միաժամանակ կը դասաւանդէ որպէս օգնական դասախօս Գենդերային (Gender) Ուսումնասիրութեանց բաժանմունքէն ներս, աւանդելով Բանաւոր Պատմութիւնը 20րդ դարուն» դասընթացքը: Դոկտորականը պաշտպանելէ ետք կը վերադառնայ Երեւան եւ կ՛ուսուցանէ «Կանանց Շարժումը 19րդ եւ 20րդ դարերուն» Երեւանի Պետական Լեզուաբանութեան Համալսարանի Քաղաքական Գիտութեանց բաժանմունքէն ներս: Հեղինակն է շատ մը գիրքերու առանձին գլուխներու եւ պարբերականներու մէջ լոյս տեսած յօդուածներու եւ անոնց քննարկումներուն, որոնց արդիւնքներուն եւ իր հետազօտութիւններուն

Massis Weekly

Volume 33, No. 1 **Saturday, JANUARY 19, 2013**

Sarkisian Slams Azerbaijan, Turkey

Calls for International Recognition of Nagorno-Karabakh's Independence

Sarkisian speaking at the Armenian Defense Ministry

YEREVAN -- President Serzh Sarkisian lashed out at Azerbaijan and Turkey and called for international recognition of Nagorno-Karabakh's independence in an unusually strongly-worded speech delivered in Yerevan on Tuesday.

He said Armenia must be prepared for renewed war in Nagorno-Karabakh "at any moment" because of what he called "Armenophobic, fascist and bellicose policies" pursued by the Azerbaijani leadership.

Sarkisian addressed senior central and local government officials, lawmakers and judges as well as the top army brass during an unprecedented meeting held at the Armenian Defense Ministry one week before the official start of campaigning for next month's presidential election.

The official purpose of the meeting reported by the presidential press office was to discuss the results of major exercises held by the Armenian military last year and broader security issues. Sarkisian commented on those drills but spoke about the Nagorno-Karabakh conflict and Turkish-Armenian relations in greater detail.

"The main aim of our foreign policy is to finally formalize our victory in the aggressive war that was unleashed against Artsakh (Karabakh) by Azerbaijan," he declared. "The Nagorno-Karabakh Republic must be recognized by the international community because there is no logical

Continued on page 4

Putin OKs New Defense Deal With Armenia

MOSCOW -- President Vladimir Putin has formally authorized Russia's government to negotiate a new defense agreement with Armenia that should lead to joint manufacturing weapons and other military equipment by the two nations.

The RIA-Novosti news agency reported late on Monday that Putin accepted a government proposal to hold talks with the Armenian side on the signing of the "agreement on the development of military-technical cooperation." No further details were reported.

It was an apparent reference to a draft accord that was approved by the Armenian government last November. The government said at the time that it commits Armenian and Russian defense companies to supplying each other with equipment, assembly parts and other materials needed for the production, modernization and repair of various arms. It also reportedly stipulates that the jointly manufactured weaponry cannot be re-exported or transferred to third countries without the supplier's permission.

Artur Baghdasarian, the secretary of Armenia's National Security Council, told reporters last week that the deal has already been finalized. He said it will allow the Russian and Armenian defense industries to "establish direct links and deepen cooperation." Baghdasarian did not specify when it will be signed.

A veteran Russian lawmaker, Nikolay Ryzhkov, said late last year that Putin plans to visit Armenia at the beginning of 2013.

Yerevan and Moscow had already agreed earlier to step up cooperation between their defense industries within the framework of the Russian-led Collective Security Treaty Organization (CSTO). Nikolay Bordyuzha, the CSTO secretary general, said in late 2011 that they are setting up joint ventures in Armenia for the "maintenance, repair and modernization of some types of weaponry."

Also, Russia is supposed to provide "special military hardware" to the Armenian military in accordance with a Russian-Armenian defense accord signed in 2010. The deal extended the presence of a Russian military base in Armenia by 24 years, until 2044.

Mexican Court Rejects Heidar Aliyev Monument

MEXICO CITY -- Mexico's Federal Administrative Court dismissed a complaint filed by Azerbaijan's Embassy to prevent city authorities to dismantle and remove a statue of Azeri dictator Haydar Aliyev from a park at the center of the city, reported the Cronica newspaper.

The court's decision paves the way for the statue's removal.

The statue was erected over the summer, after the Azeri government invested a reported $10 million in renovation of the park and the statue. The giant statue had raised concerns with citizens and protests from activists who decried the city's decision to house a statue of a known dictator along such figures as Abraham Lincoln and Mahatma Gandhi.

In late November, a three-person panel appointed to investigate the erection of the statue in the city's Reforma Boulevard recommended that the statue be removed, prompting Azerbaijan's Ambassador to Mexico Ilgar Mukhtarov to threaten retaliation against the Mexican government, including the closure of Baku's representation in Mexico.

The Azerbaijani Embassy appealed the commission decision to the district court requesting an injunction to stay the decision to remove the statue.

Haydar Aliyev statue in Mexico City park

In November, Muktarov also said Azerbaijan would cancel $4 billion in investment projects for Mexico, saying if the then Mexico City Mayor Marcelo Ebrard "decides to remove the monument, we will cancel the projects, close the embassy, it would hurt the relationship between the two countries, and it would not be good for his image to be the person who prevented a $4-billion investment."

Freedom House Upgrades Karabakh's Rights Rating

NEW YORK -- The U.S. human rights watchdog Freedom House upgraded Nagorno-Karabakh's status from "not free" to "partly free" in an annual global survey of civil rights and liberties released on Wednesday.

Freedom House assesses the policy of the authorities of the world's states per two criteria: political rights and civil liberties. Each of these dimensions is assessed on a scale from 1 (maximum) to 7 (minimum). According to both criteria, the Nagorno-KarabakhRepublic received "5."

"Nagorno-Karabakh's status improved from Not Free to Partly Free due to a competitive presidential vote in July," reads the latest edition of its "Freedom in the World" report. It says that the election saw the participation of "a genuine opposition."

Freedom House referred to Vitaly Balasanian, a retired army general who challenged incumbent president Bako Sahakian in the elections.

According to official results of the July 19 balloting, Sahakian was reelected with 66.7 percent of the vote, while Balasanian got 32.5 percent. The latter called the vote "free but not fair."

The Karabakh ballot was hailed by Armenia but condemned as illegitimate by Azerbaijan. The U.S., Russian and French mediators, for their part, said they "acknowledge the need for the authorities in Karabakh to try to organize democratically the public life of their population with such a procedure."

Armenia was also rated "partly free" in the Freedom House survey covering 195 nations. Still, the watchdog raised the country's "political rights" rating from 6 to 5, citing "peaceful" parliamentary elections held there in May 2012. It said the polls "rebalanced the decline stemming from the violent aftermath of the 2008 presidential vote."

Arch Puddington, Freedom House's vice president for research, referred to Armenia as one of the few "bright spots" in the non-Baltic former Soviet Union. "Otherwise, Eurasia is one massive sea of not-free countries," he said.

Azerbaijan is one of the countries that are considered "not free" by Freedom House. The group based in Washington and New York believes that "basic political rights are absent, and basic civil liberties are widely and systematically denied" there.

Eights Candidates Certified to Run in Armenia's Presidential Elections

YEREVAN -- Armenia's Central Electoral Commission (CEC) has certified eight candidates out of the fifteen who originally registered, as eligible to appear on the ballot for the presidential election slated for February 18.

The 48 hours, which the Central Electoral Commission (CEC) had given to eight presidential hopefuls in order to pay the AMD 8 million (approx. $20,000) collateral to be able to run, have expired on Thursday. Seven candidates were disqualified for not having presented proof of paying the state registration fee .

The eight candidates in the running are: Leader of the Republican Party of Armenia, incumbent President Serzh Sarkisian, President of the National Self-Determination Union Paruyr Hayrikian, President of the "Heritage" Party Raffi Hovhannisian, President of the "Liberty Party," MP Hrant Bagratian, President of the "National Accord" Party Aram Harutyunian, Adviser on Political Issues of the "Refugees and International Law" NGO Arman Melikian, Specialist of epic Vardan Sedrakian and Chairman of the "Radio Hay" Board Andrias Ghukasian.

The election campaign starts on January 21 and will end on February 16.

Syrian Airline Halts Armenia Flights

ALEPPO -- Syria's national airline has suspended weekly flights to Armenia, mainly used by ethnic Armenians fleeing the country, following fierce fighting between government forces and rebels reported around Aleppo airport.

The Syrian Air carrier has not flown to Yerevan so far this month. Its most recent Aleppo-Yerevan flight scheduled for January 8 was cancelled because of what the company's Yerevan office described as a temporary closure of the international airport in Syria's largest city. The next flight slated for Tuesday will also not take place for the same reason, the office said on Monday.

Zhirair Reisian, a spokesman for a Syrian diocese of the Armenian Apostolic Church, confirmed the airport closure in a phone interview with RFE/RL's Armenian service (Azatutyun.am). Reisian said Syrian authorities say the airport is now undergoing repairs that should be over by January 17. He insisted that it remains under government control.

"The airport is OK but there are problems around it," Krikor Zopian, another Aleppo-based Syrian Armenian, said by phone. In his words, government troops have been trying to fight back rebel attempts to control roads leading to the airport. "They say that the flights will resume in the next few days," added Zopian.

Citing Syrian opposition sources, news agencies reported earlier this month that fighting around Aleppo airport intensified and halted flights from the city to the capital Damascus on New Year's eve. Syrian state media, for its part, said the army loyal to President Bashar al-Assad is clearing the surrounding areas of "terrorist" groups.

Syrian Air continued to fly to Armenia even after Turkey banned Syrian aircraft from using Turkish airspace in October. Its Aleppo-Yerevan flights were rerouted through Iraq and Iran.

Armenia's national airline, Armavia, also carried out such flights once a week until ending the service for security reasons in September.

Thousands of Syrian nationals, virtually all of them of Armenian descent, have fled to Armenia on board Syrian Air and Armavia jets since the outbreak of the bloody conflict in the Middle Eastern nation nearly two years ago. Many others have come to their ancestral homeland by land, via Turkey and Georgia.

Armenia Introduces Visa-Free Regime for EU Citizens

YEREVAN -- Pursuant to the Governmental Decree of the Republic of Armenia dated October 4, 2012, the citizens of the EU member-states and the Schengen Acquis states shall be exempted from the visa requirement for travel to and stay in the Republic of Armenia.

Beginning January 10, citizens of EU member states can visit Armenia and stay in the country without a visa for 90 days. The same applies to citizens of Switzerland which is not an EU member state but is in the Schengen zone.

EU and Armenia signed on 17 December 2012 a visa facilitation agreement at a ceremony that took place in Brussels. The agreement makes it easier and cheaper for citizens of Armenia, in particular those who travel most, to acquire short-stay visas allowing them to travel to and freely throughout the EU. A short-stay visa is a visa for an intended stay of no more than 90 days per period of 180 days.

For some categories of frequent travellers and under certain conditions, member states are supposed to issue multiple-entry visas with a validity from one to up to five years. Holders of diplomatic passports are exempted from the visa obligation.

The agreement also provides that the visa handling fee will not be collected for certain categories of applicants, including members of official delegations, children below the age of twelve, pensioners, researchers and students.

Woman Gives Birth on Novosibirsk-Yerevan Flight Baby Named After Flight Attendant

YEREVAN -- A passenger who gave birth on a plane travelling to Armenia has named her daughter after the flight attendant who helped deliver her.

The flight had been heading from Novosibrisk in Siberia on Saturday. The birth on the plane took place two hours before the Armavia airliner was scheduled to land in Yerevan.

The woman has reportedly named her daughter Hasmik, after the flight attendant who helped deliver her, Hasmik Ghevondyan.

Gevondyan said Armina Babayan, 31, was showing all the signs of an imminent birth and the plane was too far out and too high up to make an emergency landing.

Gevondyan rallied her colleagues together and -- ready or not -- a passenger was having a baby aboard the flight.

Armavia flight attendant Hasmik Ghevondyan

"Even our male colleague, Grigor, did his part, bringing water and napkins," Gevondyan told The Associated Press.

Both mother and baby are said to be doing well.

Katherine Sarafian Wins Golden Globe for 'Brave'

LOS ANGELES -- Katherine Sarafian, producer of the animated feature film, Brave, took home a Golden Globe award Sunday night January 13, 2013 when her film won for Best Animated Feature Film.

This is a good omen for Sarafian and her film, since Brave is nominated for both an Annie Award and an Academy Award, both will be announced next month at their respective award ceremonies. The Annie Awards will be handed out on February 2 while the Academy Awards will take place on February 24.

Sarafian and Brave director Mark Andrews, who accepted the award, took the stage during Sunday's ceremony at the Beverly Hilton Hotel.

Brave, which was a critical and box office success last summer, was produced by Pixar Animation Studios and distributed by Walt Disney Pictures.

Brave competed for the Golden Globe alongside Frankenweenie, Hotel Transylvania, Rise of the Guardians and Wreck-It Ralph.

Biography: Katherine Sarafian is a producer at Pixar Animation Studios. She started at Pixar as an artist but was shifted from the art department to marketing during the making of A Bug's Life by Pixar head Steve Jobs. She then became a producer within Pixar. Safarian produced Pixar's 2006 short film Lifted and its 2012 theatrical release Brave, for which she was nominated for the Producer's Guild Award for Outstanding Producer of an Animated Theatrical Motion Picture.

From Susurluk to Paris

By Hrayr s. Karagueuzian

The Susurluk scandal refers to the events surrounding the peak of the Turkey–Kurdistan Workers' Party conflict, in the mid-1990s. It is considered a scandal because it indicated a close relationship between the government, the armed forces, and organized crime. The relationship came into existence after the National Security Council (MGK), Turkey's highest body of authority conceived the need for the marshaling of the nation's various "resources" to combat the separatist, Kurdistan Workers' Party (PKK)

The scandal surfaced with a car crash on 3 November 1996, near Susurluk, in the southeastern province of Balýkesir, Turkey. The scandal revealed relations between criminal networks, the police, and the government in Turkey. When a government car crashed, found at the scene were: Abdullah Catli, internationally wanted alleged murderer; chief police officer Huseyin Kocadag; and Sedat Bucak, a deputy for the True Path party (DYP) the political party of then Prime Minster Tanzu Ciller. A sinister alliance of political representatives with gangsters in combating the Kurds was hence exposed.

Fast forward to 2013; three Kurdish women were murdered execution style in the Kurdish Information Center in Paris on January 11, 2013. One of the three murdered women, Sakine Cansiz, was a close companion of Andullah Öcalan's, the imprisoned leader of PKK. She was present when the Kurdish Workers' Party (PKK) was founded in the late 1970s and spent years in the Diyarbakir Prison, notorious for the systematic torture that took place there, and later went on to become an important PKK representative in Europe.

Who Is Responsible? The question of who was behind the killings of the three Kurdish women remains unanswered at the present. However, the lessons of the past indicate a clear role for the Turkish "deep state" in assassination plots. The examples Hrant Dink who was trying to assemble and catalog the identity of Turkish citizens of Armenian descent thus bringing forward the memory of the Gencoide, the recent assassination of a teacher in an Armenian School in Turkey all point to an organized assassination rather than an ordinary killing. Surprisingly, Dink's case was initially dismissed as an organized murder. However, most recently the prosecutor's office of Turkey's Supreme Court of Appeals has asked the top court to overturn the rulings as an "ordinary killing," arguing that the assassination was "organized."

"Anything is possible," says the Turkish journalist Saruhan Oluç . "Both opponents of the peace process within the PKK, or Turkish right-wing extremists linked to the security apparatus who oppose an agreement with the Kurds, are potential perpetrators." A politically correct discourse would be to suggest an "internal Kurdish struggle" as PM Erdogan did without wasting time. However he did not dismiss a more sinister possibility. Erdogan, with his Islamist agenda is a different breed of politician compared to his late mentor PM Erbakan. Erdogan is credited in dismantling of a military plot Balioz (Sludge hammer) designed to topple his government, However, Erdogan's selective pursuit of justice is devoid of a high moral compass. He is after the truth that brings him more power and against issues that bring forward the memory of the Genocide. "That's how it is here," says the journalist Saruhan Oluç. "A positive step [i.e., talks with Ocalan] has barely been made before another setback takes place." The journalist was referring to the recent "opening" by the Turkish PM Erdogan, who had sent a representative to ostensibly discuss possible ways of ending the lethal violence with the PKK leader Ocalan.

The question was and remains: Which Turkish government can be trusted, the "deep" or the "not so deep?"

23 Years Have Passed Since Armenian Pogroms in Baku

By Ivan Gharibyan

This day, 23 years ago, tragic events that occurred in the multinational, but not at all tolerant, city of Baku, shocked the entire world. On January 13, 1990, after a regular rally of the national fascist Popular Front of Azerbaijan (PFA), several thousands of brutalized "humans" went raiding the homes of Armenian residents. The distinctive feature of the unprecedented ethnic pogroms in the capital of one of the Soviet republics – when the USSR was in its death throes – was that attacks and murders had been thoroughly planned, with lists of Armenians put up at the PFA headquarters.

The Armenian pogroms, especially their domestic political backgrounds, are a taboo in present-day "democratic and prosperous" Azerbaijan. They in Baku grudgingly recall that the then Azeri authorities led by Abdurahman Vezirov, and even the PFA, fell unwilling victim to the veteran politician Heydar Aliyev, who had been relieved of the post of First Secretary of the Communist Party of Azerbaijan as far back as 1982 for conniving at rampant corruption and supporting the clan system.

Abdurahman Vezirov, who was appointed First Secretary of the Communist Party of Azerbaijan on May 21, 1988, waged a desperate struggle against the Aliyev clan, trying to clear the Central Committee of the ubiquitous protégés of the former corrupt leader, who were seeking to destabilize the situation in the country. He stated that Azerbaijan's interethnic problems were the result of Aliyev's leadership. Moreover, he publicly accused Aliyev of organizing the supply of food to the participants in the anti-Armenian rally in November-December, 1988, which was dispersed by Soviet troops.

By January 13, 1990, when Armenian pogroms began in Baku, the local Armenian population had considerably decreased down to 50,000. The tragic events were the result of forcible transfer of power to the PFA, amid the imminent collapse of the USSR. By that time, when the unspeakably cruel Armenian pogroms began, the Soviet troops deployed in Baku had been blocked in the Salyanski barracks. Some members of the Russian servicemen's families were killed or injured. The PFA blocked the Russian troops for the only purpose of leaving the local Armenian population helpless before the thousands of fascist and recidivists.

Another factor complicating the situation was that the Supreme Soviet of the Azerbaijani SSR was unable to hold a sitting to give consent to the introduction of troops as the PFA threatened with physical violence.

Heydar Aliyev, who has been proclaimed "national leader" of Azerbaijan, was in Moscow and would not give ear to Mikhail Gorbachev's requests to order his supporters to leave the streets of Baku. The only purpose was as many victims as possible and introduction of Soviet troops to have the Azeri people demand the return of 'Heydarbaba". Why on earth was Heydar Aliyev to prevent murders, if he could coordinate them by means of the Nakhichevan clan and such thugs as Neimat Panahov? Yes, immediately after returning to power in Azerbaijan, Heydar Aliyev appointed Panahov his advisor. After he failed to come to terms with Heydar's successor, Ilham Aliyev, Panahov declared himself an oppositionist and was sentenced to jail two years ago. However, he was sentenced to two months imprisonment for criticizing the authoritarian regime and election rigging rather than for having been at the head of the cutthroats during the 1990 Armenian pogroms in Baku.

Whatever efforts the incumbent Azeri authorities make to conceal the truth about Armenian pogroms in Baku on January 13-19, 1990, evidence and the international community's responses are sufficient. On January 18, 1990, the European Court demanded that the Soviet leader order the introduction of troops to Baku to put an end to the Armenian pogroms.

There is no point in concealing

Continued on page 4

Richard Hovannisian to Lecrure on Smyrna Catastrophe at Western Diocese

BURBANK -- Professor Richard G. Hovannisian will present an illustrated lecture, "The Smyrna Catastrophe, 1922-2012," on Thursday, January 31, 2013, at 7:00 p.m., in the Zorayan Museum at the Western Diocese of the Armenian Church, 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504. The program will be held under the auspices of the Western Diocese, His Eminence Abp. Hovnan Derderian, Primate, and with the co-sponsorship of The Ararat-Eskijian Museum and the National Association for Armenian Studies and Research (NAASR).

The month of September 2012 marked the 90th anniversary of the Smyrna Catastrophe when much of the city, the second largest in the Ottoman Empire, was destroyed by fire during the final phase of the Greco-Turkish War. The calamity marked the end of a strong Christian presence in the historic Aegean coastal regions and turned hundreds of thousands of Greeks and Armenians into refugees.



In this illustrated lecture, Prof. Richard Hovannisian will discuss the important role of Smyrna (Izmir) in modern Armenian history and the inferno that engulfed the city in September 1922. Hovannisian is the editor of the recently published Armenian Smyrna/Izmir, the eleventh volume of proceedings from the UCLA conference series "Historic Armenian Cities and Provinces."

Sarkisian Slams Azerbaijan, Turkey

Continued from page 1

reason why a people that exercised and then defended, in an unequal struggle, its legal right to self-determination must ever be part of Azerbaijan."

Sarkisian condemned Baku's regular threats to forcibly win back Karabakh and "monstrous" anti-Armenian statements made by Azerbaijani leaders. "As a result, the people of Azerbaijan will not be prepared for a peaceful co-existence [with the Armenians] for a long time, even if an agreement to peacefully end the conflict is reached," he said.

"We must be prepared every day and at any moment for a new military adventure by a regime propagating war," he added, expressing confidence that the Armenian side can give "a worthy response to any challenge."

The Armenian leader, who is seeking a second term in the February 18 election, went on to criticize Turkey for "unconditionally supporting Baku's anti-Armenian policy" and trying to "clinch unilateral concessions from Armenia." And he again accused Ankara of walking away from the 2009 Turkish-Armenian agreements to normalize bilateral ties.

Sarkisian further stated that it is incumbent on Turkey to officially recognize the 1915 massacres of Armenians in the Ottoman Empire as genocide. "I think that without Turkey's sincere repentance and the elimination of consequences of the Genocide Armenia's secure existence in the region will remain endangered," he said.

In his extensive speech, Sarkisian also reaffirmed Armenia's national security priorities. He referred to close military ties with Russia as the cornerstone of Yerevan's security doctrine while reiterating support for "close and transparent cooperation" with NATO.

23 Years Have Passed Since Armenian Pogroms

Continued from page 3

the fact of ethnic pogroms in Azerbaijan. You can just look through the Jan 15, 1990, issue of the Bakinski Rabochy newspaper. You can read a press report on the January 13-14 pogroms. The report was undersigned by three top officials of Azerbaijan: First Secretary of the Central Committee of the Communist Party Abdurahman Vezirov, Chairwoman of the Presidium of the Supreme Council Elmira Kafarova and Head of the Council of Ministers of Azerbaijan Ayaz Mutalibov. The official report admits that "Armenians were most of the victims",

which proves the ethnic nature of the tragic events in Baku. As to the nonsense spread by the Azeri propaganda, the only aim is generating anti-Armenian hysteria and concealing Heydar Aliyev's involvement in another Armenian massacre in Azerbaijan.

Friends of the UCLA Armenian Language and Culture Studies

Dr. Hasmik Khalapyan Lectures on Ottoman-Armenians and Women's Social Participation

GLENDALE -- The Friends of the UCLA Armenian Language and Culture Studies, a university recognized organization liaising with the Armenian community of Southern California, is pleased to announce an upcoming lecture by Dr. Hasmik Khalapyan, currently a visiting professor in the UCLA Department of Near Eastern Languages and Cultures, on the following topic "The Philosophy and Policies of Education and Charity among the Ottoman-Armenians and their Impact on Women's Social Participation (1876-1914)." The event will be held on Sunday, January 27 (4-6 p.m.), at the Glendale Public Library.

Dr. Khalapyan is an Assistant Professor in the Department of Psychology at Yerevan State University, where she teaches graduate level courses in the fields of Sociological and Social Theory, Intercultural Studies and Communication, and the Psychology of Gender. Since 2009 she is concurrently Academic Director of the AGBU Armenian Virtual College. After a BA and MA in English and French Linguistics, Khalapyan explored the field of English Literature in a second Masters at Miami University, Oxford, Ohio, before continuing to her doctorate in the discipline of history at the prestigious Central European University, Budapest, Hungary, investigating the social status and role of women in Ottoman-Armenian society. During her research there, she also served as a teaching assistant in the Department of Gender Studies, where she offered a course on Oral History in the 20th Century. Returning to Yerevan after defending her thesis, she also taught a course on worldwide Women's Movements in the Nineteenth and Twentieth Centuries in the Department of Political Science at Yerevan State Linguistics University. The recipient of a variety of fellowships, she has authored several book chapters and articles in peer reviewed journals and presented the results of her investigations in a variety of international conferences in Odessa,

Ukraine, Istanbul, Amsterdam, and Montreal. A periodic visitor to Los Angeles to take part in the UCLA Graduate Student Colloquium in Armenian Studies and to speak at the conference on Armenians of Asia Minor, she has now returned to UCLA to offer a popular course entitled "Local Endeavors, Global Context: Armenian Women's History and Movement from 19th to 21st Centuries."

Her lecture at Glendale Public Library focuses on educational initiatives among the Ottoman-Armenian community over the period 1876 to 1914 pursued by numerous charitable organizations under the impact of Modernity. It will highlight the ways in which this movement stimulated new formulations and perceptions of charity that promoted women's schooling. It further explores the ways in which women were influenced by and participated in the reform in education and charity that they believed would result in the wellbeing of the nation in general and women and children in particular. The lecture will be illustrated by a powerpoint presentation.

Glendale Public Library (222 E. Harvard St., Glendale CA 91205). For further information (310) 275-2767 or (818) 952-1058.

"Visit Armenia, It Is Beautiful" Announces Essay Contest #3

Visit Armenia it is Beautiful www.VisitArmenia.org

The "Visit Armenia, It Is Beautiful" project has organized an Essay Contest #3 open
To (9th to 12th grades) high school level students.
Participants should write an essay in Armenian or English about "Why I want to visit Armenia"
The deadline to register is March 15, 2013
The deadline to submit the essays is April 02, 2013
Winners to be announced May 02, 2013
For full details, application forms and questions, please visit http://www.visitarmenia.org/html/promotional.html
or e-mail ara@visitarmenia.org
We anticipate an overwhelming response and a very large number of participants, so please do not delay your registration.

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ «Ա՛ՅՍ ԵՍ ԵՄ» ՆՈՐ ԳԻՐՔԸ

ՎԱՐՍԻԿ ՑԱԿՈԲԵԱՆ

Հենրիկ Անասեանի «Ա՛յս ես եմ» ինքնակենսագրական յուշագրութիւնը յաջորդաբար բացում է նրա դժուար կեանքի էջերը:

Ամէն գրուածը նոր իրադարձութիւն է, որը կարդում ես անհամբերութեամբ, այդ ընտանիքին դժուար վիճակից դուրս գալը տեսնելու ակնկալիքով, ապրելով նրանց ապրումներով եւ զգալով հոգուդ վրայ այդ ճնշումը:

Հոգեկան ծանր ապրումները վաղ մանկութիւնից սկսած ստիպում են ժամանակից շուտ խելահաս դառնալու Հենրիկ Անասեանին: Գիրքը գրուած է գեղարուեստական մակարդակով, եւ կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ, հիանալի արեւելահայերէնով, մէջբերումները արեւմտահայերէնով է գրուած, քանի որ ծնողները արտագաղթել էին Ֆրանսայից ընտանիքում խօսակցական լեզուն արեւմտահայերէնն էր:

Դա մի հարուստ կենսագրութիւն է, բազում դժուարութիւններով լեցուն:

Անսահման սէր ծնողների նկատմամբ եւ միեւնոյն ժամանակ մեծ ցաւ: Նրանց դժուար ճակատագրի համար:

Հենրիկ Անասեանը մեծ սիրով եւ գորովանքով է արտայայտւում իր մօր՝ Տիկ. Վերժինէի մասին, որը Եղեռնից հրաշքով փրկուած դեռ մի փոքրիկ աղջիկ՝ ընկնում է Թրքական որբանոց, որտեղից 1918 թուին «Հայ Որբախնամ Մարմնի» ջանքերով տեղափոխում է հայկական որբանոց: Իսկ 1923 թուին տեղափոխւում է Յունաստան, 1927 թուին Փարիզ, տեղի դպրոցասէր Տիկնանց Միութեան վարժարանում ուսանելու:

Այդ վարժարանի հանդէսներից մէկի ժամանակ ծանօթանում են Յակոբ Անասեանն ու գեղեցկուհի Վերժինը եւ 1930 թուականին ամուսնանում են:

Ծնւում են երկու զաւակները՝ Արսէնը եւ Հենրիկը: 1936 թուականին Ֆրանսայից արտագաղթում են Հայաստան: Դա Ստալինեան ճնշումների տարիներին էին եւ դեռ ոտքի չկանգնած սկսւում է Հայրենական մեծ պատերազմը:

Հայրը՝ Յակոբ Անասեանը, նշանաւոր հայագէտ եւ գիտնական 1936-41 թուականներին աշխատում է Երեւանի պետական համալսարանում գիտական աշխատողից մինչեւ բաժնի վարիչ է դառնում:

1941 թուին նրան զինւորագրում են եւ պատերազմի առաջին օրերին Յակոբ Անասեանը գերի է ընկնում: Շատ տանջանքների միջով հրաշքով փրկուած Յակոբը տուն է վերադառնում: Պատերազմը վերջանալուն պէս եւ նորից սկսում է աշխատել Համալսարանում: Որոշ ժամանակ յետոյ 13 գիտաշխատողների հետ, որոնք նոյնպէս գերի էին եղել, հեռացւում են աշխատանքից...

Ընտանիքի հոգսը ընկնում է տիկ. Վերժինէի ուսերին, որը իր ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար աշխատել է խոհարար եւ անգամ շինարարութեան բանուոր:

Դա յետ պատերազմեան ամենադժուար տարիներն էին, համատարած սով, եւ այդ տարիներին մի կտոր հաց վաստակելը շատ դժուար էր:

Այդ դժուար պայմաններում Յակոբ եւ Վերժինէ Անասեանները դաստիարակել եւ ուսման են տուել իրենց զաւակներին, զրկելով իրենց շատ բաներից:

Թէ ինչպիսի դժուարութիւններով է անցել պատանի Հենրիկը, արդէն պարզ է, բայց նա ունէր մի մեծ երազանք՝ դիրիժոր դառնալ:

Դա անիրականալի մի ցանկութիւն էր, որովհետեւ չունէր երաժշտական կրթութիւն: Նա Ունենալով կամքի մեծ ուժ, 19 տարեկանում, սկսեց նոտաներ սովորել եւ ինքնակրթութեամբ, առանց երաժշտական դպրոց աւարտելու, ընդունուեց Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժինը:

Դա նման էր հեքիաթի կամ երազի... Ուսումնարանում Հենրիկը սիրահարւում եւ ամուսնանում է շնորհալի սկսնակ երգչուհի՝ Մարիետայի հետ, որը յետագայում երգում է Էջմիածնի մայր տաճարի երգչախմբում Լուսինէ Զաքարեանի հետ, նոյն երգչախմբում երգում էր նաեւ Հենրիկ Անասեանը...

Հենրիկն ու Մարիետան ունենում են երկու զաւակ՝ Արամը եւ Արմէնը:

Ուսումնարանը աւարտելուց յետոյ անցնում է աշխատանքի ռատիոյում: Երաժշտական բաժնի խմբագրութիւնում որպէս խմբագիր, զուգահեռ աւարտելով կոնսերուատորիայի խմբավարական եւ յետոյ դիրիժորական բաժինները...

Աշխատում է ռատիոյի կանանց երգչախումբի խմբավար, կողք կողքի աշխատել է շատ նշանաւոր երաժիշտների եւ դիրիժորների հետ, վայելելով նրանց սէրն ու յարգանքը:

Հենրիկ Անասեանի բազմաթիւ երգերի հեղինակ է եւ շատ երգերի երաժշտական ձեւաւորող, բայց նրա երազանքը սիմֆոնիկ նուագախմբի դիրիժոր դառնալն էր:

Եկաւ այդ բաղձալի օրը.

«1916 թուականին կանգնեցի ֆիլարմոնիայի դիրիժորական վահանակի առջեւ» յիշում է մաեստրոն...

Նա երջանիկ էր, որ հասել էր իր երազին շատ մեծ դժուարութիւններ յաղթահարելով...

Որոշ ժամանակ յետոյ այդ տեղի համար յայտնւում է այլ թեկնածու «թիկունքով», որի մասին տեղեկացուելով մաեստրոն դիմում է գրում եւ ազատւում է աշխատանքից...

Ամբողջ կեանքի իր նպատակը, որին հասել էր այդքան դժուարութեամբ, նա կորցրեց մի վայրկեանում:

Հենրիկ Անասեանը շատ դժուար տարաւ այդ հարուածը...

Այդ դժուար հոգեկան վիճակում նրան նեցուկ էր սիրելի կինը՝ Մարիետան:

Բայց կեանքը շարունակւում է...

Այնուհետեւ մաեստրոն աշխատում է որպէս Ռատիոյի Ժողովրդային Գործիքների անսամպլի դիրիժոր աշխատելով մեր անուանի երգիչների՝ Յովհաննէս Բաղալեանի, Օֆելիա Համբարձումեանի, Ֆլորա Խորենեանի, Ռուբէն Մաթեւոսեանի եւ ուրիշների հետ:

1970 թուականին Հենրիկ Անասեանը հօրաքրոջ որդու հրաւէրով հիւրընկալւում է Ֆրանսայում, որը շրջադարձային է լինում նրա համար: Վերադառնալով տուն, նա որոշում է, որ պէտք է ապրի արտասահմանում:

Մեծ դժուարութիւններ յաղթահարելով թոյլտւութիւն են ստանում արտագաղթելու:

1978 թուին Անասեան ընտանիքը, իր հանգրուանն է գտնում հայաշատ Լոս Անճելէսում:

Այստեղ էլ Հենրիկ Անասեանը իր արժանի տեղը գտաւ երաժշտական եւ գրական աշխարհում: Մաեստրոն ստեղծեց «Սիփան» երգչախումբը, որը ճանաչուած է թէ՛ Ամերիկայի մէջ եւ թէ՛ այլ երկրներում:

Հենրիկ Անասեանը ունեցել է մի դժուարին եւ յիշատակելի կեանքի ճանապարհ, նա իր նպատակին հասնելու համար յաղթահարել է բազմաթիւ խոչընդոտներ՝ թողնելով նրա սրտի վրայ, կեանքի հարուածներից, ապաքինուած վէրքերի բազում սպիներ...

Տաղանդաւոր երաժիշտ, դիրիժոր, տաղանդաւոր գրող եւ մեծատառով անհատականութիւն: Այդպիսին է Հենրիկ Անասեանը...

«ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ»Ը ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ Է

Հայ առաջին տպագիր գիրքը՝ Ուրբաթագիրքը, առաջին անգամ վերածուած է աշխարհաբարի եւ կը ներկայանայ իբրեւ գիտական հրատարակութիւն:

Գիրքին աշխարհաբար տարբերակը բաղկացած է 400 էջերէ եւ մէկ ներդիրէ՝ քարտէսէ:

Ան հրատարակուած է դասական ուղղագրութեամբ: Ան նուէր է հայ ժողովուրդին, որուն երկու հատուածներն ալ փոքրիկ դժուարութիւն պիտի յաղթահարէին, մէկը լեզուի, քանի որ գրուած է արեւելահայերէն, միւսը՝ գրութեան, որովհետեւ տպագրուած է դասական ուղղագրութեամբ: Ան այս աշխատանքը փոքր քայլ մը կը համարէ դէպի երկու հատուածներու աւելի մերձեցում: Ինչպէս հայկական տպագրութեան 500-ամեայ առաջնեկը, այս գիրքը եւս նախ եւ առաջ համախմբման խորհուրդ ունի:

Ուրբաթագիրքի աշխարհաբար տարբերակը կ'ընդգրկէ յառաջաբան, 1512-1920 թուականներու հայերէն տպագիր գիրքի ժամանակագրական եւ վիճակագրական աղիւսակ, Յակոբ Մեղապարտի տպագրած Ուրբաթագիրքի պատճէնը, որ նախքան թարգմանելը անհրաժեշտ էր վերծանել, ապա՝ վերծանուած ու ընթեռնելի գրաբար եւ աշխարհաբար հանդիպադիր բնագիրները, բնօրինակին մէջ վկայակոչուած վանքերու եւ եկեղեցիներու մասին տեղեկատու, անոնց քարտէսը, ծանօթագրութիւններ, ինչպէս նաեւ անձնանուններու եւ տեղանուններու ցանկեր:

Հրատարակութեան կ'ուղեկցին հայկական մանրանկարչական արուեստի 16 նմոյշի լուսանկարներ, անոնց մասին հակիրճ տեղեկատուութիւններով, որոնք ոչ միայն հետաքրքրական կը դարձնեն գիրքը, այլ նաեւ լուռ քարոզիչներ են մեր մշակոյթի հարուստ եւ անկրկնելի շերտի մը:

Հայաստանի մշակոյթի նախարարութեան կից Գրահրատարակչութեան գործակալութեան կողմէ կազմակերպուած 14 Դեկտեմբեր 2012-ի մրցանակաբաշխութեան ժամանակ, Լուսինէ Աւետիսեանի թարգմանած ու հրատարակած Ուրբաթագիրքը արժանացած է երկրորդ մրցանակի՝ «Տարուան Լաւագոյն Գիրք՝ Գիրքի Մասին» անուանակարգին մէջ:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԷՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Մասնակցութեամբ՝
ՍՏԵՓԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

Շաբաթ, 26 Յունուար 2013
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 N. Allen Ave. • Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմէլ՝ (818) 913-9311
ՃԱՇ ԵՒ ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ $25.00

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ (1897-1937)

ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

«Դէպի վառուող Ապագան» գացող քերթողը Հայ բանաստեղծութեան հանճարեղ ներկայացուցիչ Եղիշէ Չարենցի ծննդեան 115-ամեակին եւ գրականութեան 100-ամեակին առթիւ Հայաստանի մշակոյթի նախարարութեան նախաձեռնութեամբ 2012 թուականին հրատարակուած է բովանդակալից եւ նկարազարդ 120 էջնոց գիրք մը, ուր կան եղերաբախտ բանաստեղծին գործերէն հատուածներ, անարդարութեան, հալածանքի, ֆիզիքական տանջանքի ու հոգեկան տառապանքի անոր ճիչերն ու պոռթկումները:

Ան ծնած է 1897-ին Կարս, Աբգար Սողոմոնեանի եւ Թելլի Միրզայեանցի ընտանիքին մէջ: Տակաւին հազիւ պատանի՝ 1915-ին, ծնողքէն գաղտնի, կը զինուորագրուի կամաւորական ջոկատին եւ կը մասնակցի Արեւմտեան Հայաստանի ազատագրական պայքարին: Տեսնելով աւերուած Վան քաղաքը՝ կը գրէ իր նշանաւոր «Տանդէական Առասպելը»:

Բանաստեղծին քիչ անգամներ հրապարակուած նկարներէն մին:

1916-ին Չարենց կը մեկնի Մոսկուա, Շանիավսքիի անուան համալսարանին մէջ հետեւելու պատմական-բանասիրական ճիւղին, ինչ որ առիթ կ'ըլլայ ծանօթանալու գրական հակումներուն, շփման մէջ մտնելու ռուս գրողներու եւ մտաւորականներու հետ, գործօն մասնակցութեամբ գրական եւ ընկերային շարժումներու: 1917-ի վերջերը, կիսատ թողելով ուսումը, կը վերադառնայ Կարս եւ կ'ըլլայ ուսուցիչ:

Կեանքին մէջ կարեւոր հանգրուան մը կ'ըլլայ «Ցառաջ» թերթին մէջ կարդալ իր մասին գրուած «Մի նոր բանաստեղծ» յօդուածը, Հայաստանի Նորակազմ հանրապետութեան կրթական նախարար Նիկոլ Ադբալեանի ստորագրութեամբ: Նախարարատուն ներկայանալով տեսակցութիւնը կը յանգի համաձայնութեան մը՝ Չարենցին տալով քարտուղարի պաշտօն եւ սենեակ մը հոն ապրելու համար: Այսպիսով կը սկսի բանաստեղծին երեւանեան կեանքը: 1918-21-ի միջեւ ան կը գրէ ու կը հրատարակէ «Ողջակիզուող Կրակ», «Ութնեակներ Արեւին», «Փողոցային Պչրուհուն», «Սոմա», «Ամբոխները խելագարուած», «Նայիրի Երկրից» եւ այլ գրութիւններ:

1920 Նոյեմբեր 29-ին Հայաստանի մէջ կը հաստատուի Խորհրդային իշխանութիւն՝ մաս կազմելով Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան: Չարենց կը նշանակուի լուսաւորութեան (կրթական) նախարարութեան արուեստի բաժնի վարիչ: Այդ հանգամանքով մշակոյթի մարզին մէջ մեծ բարենորոգումներ կը կատարէ ան՝ հիմնելով ժողովրդական պատկերասրահ եւ կը պետականացնէ Երեւանի դրամատիկական Սթուտիան, որ աւելի ուշ կը վերածուի Գաբրիէլ Սունդուկեանի անուան թատրոնին: Հայաստանէն դուրս ապրող գրողներուն եւ մշակոյթի այլ գործիչներուն հրաւէր կ'ուղղէ հայրենիք վերադառնալու ազգային մշակոյթը ծաղկեցնելու համար, միաժամանակ աջակցելով փոքրամասնութիւններու մշակոյթի զարգացման:

Չարենց շատ աշխոյժ սիրային կեանք ունեցած է: Նախարարական իր պաշտօնին ընթացքին կը ծանօթանայ եւ կը մտերմանայ հրատարակչական բաժնի վարիչ, բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանեանի հետ, որ մեծանուն երգահան Արմէն Տիգրանեանի քոյրն էր: Այս մտերմութիւնը կը մղէ զինք գրելու Արմենուհիին նուիրուած «Էմալի Պրոֆիլը Ձեր» քերթուածներու շարքը: Այդ քերթուածները Սովետական Հայաստանի Գրողներու Միութեան յանձնած է Արմենուհիին ամուսինը՝ Վարդգէս Ահարոնեանը:

«Եղիշէ Չարենց» գործ Մարտիրոս Սարեանի (1923) Արփենիկին հանդիպելէ առաջ սիրահարուած է Լիւսի Թառայեանին, որ անպատասխան թողած է Չարենցին սէրը, մղիչ պատճառ ըլլալով վերը յիշուած քերթուածներու շարքին: Այդ միջոցին սիրային դրուագ մըն ալ ունեցած է բանաստեղծ Լէյլիին հետ:

1921 Մայիսին Չարենց կ'ամուսնանայ Արփենիկ Տէր Ասուածատուրեանի հետ եւ Հայաստանի Կոմկուսէն գործուղումով ուսման

Շար.ը էջ 18

ԲԱՅՑ ՄԵՆՔ ՀՈ՛Ս ԵՆՔ

ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ

Արդեօք ո՞ւր են:

Եւ ո՞ւր է արդեօք այն անծանօթ գայլիկը արի,
հազիւ երկու տարեկան,
ամբողջական լուրջ տարազով գեղուն,
գլխարկը գլխուն,
պահապան հօրը ձեռքէն բռնած կամ հանգչած ուսին,
յարութիւն բուրող Զատկուայ յաջորդ Երկուշաբթին, քաղաքապետարանի դաշտին վրայ,
օգոստափառ տօնական մթնոլորտի մը մէջ
եւ խուռներամ հաւաքուած Հայկեան ցեղի ուխտարու զաւակներու դիմաց,
որ կ'առաջնորդէր
»Քաղաքներէն, ճամբարներէն, դաշտերէն
Աքսորի խուլ գռիհներու խորերէն«
Ճարապլուսէն, Անթիլիասէն, Ամմանէն
Ռաս Ուլէհնէն, Դամասկոսէն, Այնճարէն
Շարքերը տողանցող՝ խրոխտ, փոթորկած,
Ծառուկեանի հետ, հաւաքաբար ուխտելով Արարատին՝

»Տե՛ս մեր շարքերը խանդաբորբ ու արի,
Տե՛ս մեր կարօտը խոյանքով Վահագնի
Տե՛ս մեր հոգին քու ձիւներուդ պէս մաքուր,
Եւ կամքը մեր, տե՛ս ժայռերուդ պէս ամուր:
Ու հաւատա կռանիթեայ ո՛վ աստուած,
Սրբազան լեռ, հաւատա
Թէ կը հասնի՛նք, մենք կը հասնի՛նք կատարիդ«:

Անոնց ոտքերուն տակ կը դղրդար գետինը,
ֆանֆարի թմբուկներու հարուածող հրաբորբ կշռոյթով,
անոնց քայլերուն համազարկ դոփիւնը կը լսուէր դաշտի սահմաններէն շատ անդին,
լեցնելով հալէպեան պայծառ եւ արեւոտ օրուայ մը երկինքը
եւ հասնելով հայրենիքի կարօտը շեփորող ամէն հայու սրտին ու մտքին:

Բարարա՛մ
Բարարա՛մ
Բարարա՛մ
Բա՛մ..., բարարա՛մ
Բարարա՛մ
Բարարա՛մ
Բարարա՛մ
Բա՛մ... բարարա՛մ

Բայց դուք հո՛ս էք
Սիրելի ազգակիցներ

Գիտակի՛ց, կարեկի՛ց, յանձնառո՛ւ:

Բայց դուք հո՛ս էք

Սրբազան Հայրեր,
Հոգեւոր հայրեր
Վերապատուելիներ
Գլխաւոր Հիւպատոս
Մեծայարգ Անդօ Պաղտասարեան-Գարուն Dairies, Inc.
Մեծայարգ Վազգէն Մատէնլեան, Տնօրէն Ազգային Շամլեան Վարժարանի
Մեծայարգ Ժան Գոսաքեան, տնօրէն Ֆէրահեան Վարժարանի
Ազնուափայլ Դոկտ. Ալինէ Դորեան Տնօրէնուհի Ալէք Փիլիպոս Վարժարանի
Ձեռնարկի բոլոր ազնիւ հովանաւորողներ
Արուեստագէտներ-հիւր եւ տեղացի
Կազմակերպիչներ-Սուրիահայութեան Ձօրակցութեան Միացեալ Մարմին
Artistis For Kids-ի պանծալի տղաք
Ազգային կառոյցներու ներկայացուցիչներ
Մամլոյ եւ հեռատեսիլի ներկայացուցիչներ
Քոյրեր, եղբայրներ
Հայորդիներ

Բայց դուք հո՛ս էք:

Հոլիվուտէն, Կլէնտէյլէն, Պըրպէնքէն
Փասատինա, Օրէնճ Գաունդի, Թորընսէն
Համախմբուած ուխտով մը բարի՞, վճռակա՞մ
Միաձուլուած կամքով մը անխախտ ու հաստատակամ
Որպէս թիկունք՝ սատարելու, նպաստելու, զոհողութեամբ
Եւ ցոյց տալու
Արեան բաղնիքներու ականտես
Ու շէն երկրի մը ուրուականներուն մէջ
Հազիւ շնչող
Հազիւ շրջող
Այդ Գայլիկի ժառանգորդ բոլոր ցեղակիցներուն
Թէ մենք կ'այրինք իրենց վէրքով
Մենք կը տնքանք իրենց վիշտով
Կը մրմնջենք մենք աղերսով
Ծունկի եկած լուռ աղօթքով

Երգահանդէս է այսօր:

Պատնէշի վրայ անկոտրում կամքով,
Դիմադրող, դիմացող եւ տոկա-

Շար.ը էջ 18

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լոս Անճելէսի 33 ամեայ «Սիփան» Երգչախմբին կից Ստեղծուում է «Սիփան» Մանկական Երգչախումբ (Հիմնադիր Հենրիկ Անասեան)
Երգչախմբի կազմում կարող են ընդգրկուել մեր համայնքի 7-15 տարեկան շնորհալի երեխաները, որոնք փորձառու խմբավար՝ Սամուէլ Վարոսեանի ղեկավարութեամբ ձեռք կը բերեն երաժշտական գիտելիքներ, եւ կ'ունենան ձայնամարզութեան դասեր փորձառու մասնագէտի հսկողութեան ներքոյ:
Ցաւելեալ տեղեկութիւնների համար զանգահարել խմբավար Սամուէլ Վարոսեանին (323) 469-1879, (323) 610-1314) կամ Հենրիկ Անասեանին (323) 217-5730:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ է ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ՝ «Ա՛ՅՍ ԵՄ ԵՍ...» ՇԱՐՔԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

(Իմ կեանքի ոլորաններում)

«Մաեստրոն մեծ վարպետութեամբ վաւերացրել է իր կեանքի ոդիսականը»:
Արտեմ Սարգսեան (Բան. դոկտ. պրոֆ.)

Գիրքը կարելի է գնել Լոս Անճելէսի բոլոր գրախանութներում կամ էլ հեռաձայնել հեղինակին՝ (323) 466-3726, (323) 217-5730

ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՃՆՆԴԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԼԻՆԴԱ ԳԱՆԴԻԼԵԱՆ

Հայ Քոյրերու Վարժարանի աւանդոյթն է ամերիկեան թէ հայկական բոլոր տօները յարգել եւ իւրաքանչիւր առիթին համար կազմակերպել յատուկ հանդիսութիւն մը, որոնց մեծագոյնը հաւանաբար Սուրբ Ծնունդն ու Նոր տարին են:

Արդարեւ, Մանկապարտէզէն մինչեւ Ութներորդ դասարանի աշակերտները իրենց դասերու կողքին կը լծուին Ծննդեան հանդիսութեան պատրաստութեան, նաեւ կը կազմակերպեն տարբեր գործունէութիւններ, որոնք աշակերտութեան մօտ կը շեշտեն տօնական օրերու պարտաւորութիւններն ու պարտականութիւնները, ինչպէս բարեսիրական կարգ մը աշխատանքներ:

Այս ամսուան ձեռնարկները կարելի է ամփոփել հետեւեալ ձեւով.

Ա. Ծննդեան փառատօնի մասնակցութիւն.-

Դեկտեմբեր, 1-ին, Հ.Ք. վարժարանը մասնակցեցաւ Մոնթրոզ քաղաքի աւանդական Սուրբ Ծննդեան փառատօնին: Մեծ խումբ մը աշակերտներ, կազմակերպութեամբ Աշակերտական խորհուրդին, ներկայացուցին վարժարանը եւ աւետեցին Քրիստոսի գալուստը, ներկայացնելով Մանուկ Յիսուսի Ծնունդը կենդանի պատկերով մը. խումբին կ՚ընկերակցէին ուսուցչական կազմէն աշակերտական խորհուրդի պատասխանատու ներկայացուցիչներ եւ ծնողներ:

Բ. Բարեսիրական աշխատանքներ.-

Տօնական օրերուն կարիքաւորին օգտակար դառնալու աշխատանքներուն աշակերտները մասնակից դարձնելու եւ այս գեղեցիկ սովորութիւնը անոնց մօտ արմատացնելու նպատակով, այս տարի դարձեալ աշակերտական խորհուրդը վարժարանի տնօրէնութեան հետ միասնաբար կազմակերպեց հետեւեալ գործունէութիւնները՝

-Զփճացող ուտեստեղէններու հաւաք, մեծ քանակ մը հաւաքուեցաւ եւ այս տարի տրամադրուեցաւ ,Մայր Թերեզայի Քոյրերու Բարեսիրական միութեան:

-Խաղալիքներու հաւաք, դպրոցէն ներս առաջինը ըլլալով իր տեսակին կազմակերպուեցաւ խաղալիքի հաւաք եւ մեծ քանակ մը տրամադրուեցաւ Մոնթրոզի հրշէջներու կեդրոնին:

-Տնազուրկերու ճաշի սպասարկում, այս տարուան նորութիւնն էր, նաեւ, որ Վարժարանիս Ութերորդ դասարանի աշակերտները ունեցան բացառիկ փորձառութիւն մը՝ մասնակցելով տնազուրկերու ճաշի մատուցման աշխատանքին, Սան Ֆերնանտո ապաստանարանի մէջ, անոնք անձամբ մատուցեցին ապաստանեալներու ճաշերը:

Գ.-Կաղանդի բացիկներ.-

Դարձեալ աշակերտական խորհուրդի կազմակերպութեամբ, այս տարի վարժարանիս բոլոր աշակերտները պատրաստեցին Սուրբ Ծննդեան եւ Նոր Տարուան յատուկ գեղեցիկ բացիկներ՝ խրախուսիչ մաղթանքներով եւ հասցէագրեցին Աֆղանիստան գտնուող ամերիկեան կայազօրքի զինուորներուն, զանոնք շնորհաւորելու, շնորհակալութիւն եւ միաժամանակ բարոյական զօրակցութիւն յայտնելու անոնց: Հետաքրքրական էր որ աշակերտները վարձատրուած զգացին երբ հեռաձայնային գրաւոր շնորհակալական պատգամ ստացան Աֆղանիստանի զինուորական կեդրոնէն:

Այս աշխատանքները բոլորը կը ծառայէին գործնականացնելու Հայ Քոյրերու Վարժարանի սկզբունքը հանդիսացող՝ Քրիստոնէական կրօնքի բարոյական դաստիարակութիւնը:

Գ. Սուրբ Ծննդեան Հանդէսներ

Հայ քոյրերու վարժարանը, ըստ աւանդութեան, այս տարի եւս իրականացուց Ս. Ծննդեան զոյգ հանդէսներ՝ Մանկապարտէզի եւ Նախակրթարանի բաժիններով, երկու յատուկ օրերու ընթացքին, հոգեկան մեծ հաճոյք եւ հրճուանք պատճառելով ծնողներուն եւ վարժարանի մեծ ընտանիքին:

Շաբաթ, Դեկտեմբեր 15-ի առաւօտեան տեղի ունեցաւ Մանկապարտէզի հանդէսը, վարժարանի «Դանիէլեան» սրահին մէջ, ներկայութեամբ՝ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Կաթողիկէ համայնքի Առաջնորդ՝ Արհիեպատիւ Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեանի, ծնողներու, մեծ հայրերու եւ մայրերու ու հիւրերու: Հանդիսութեան բացումը կատարեց մանկապարտէզի տնօրէնուհի՝ Սօնա Գազանճեան, որմէ ետք աշակերտները ներկայացուցին Յիսուսի ծնունդը՝ երգախառն թատերգութեամբ, անոնք իրենց մանկական անմեղ արտայայտութեամբ պատմելէ ետք Սուրբ Ծննդեան պատմութիւնը, երգեցին ու աւետեցին մարդկութեան Փրկչին գալուստը, սիրոյ եւ խաղաղութեան պատգամը տալով բոլորին:

Հանդիսութեան վերջաւորութեան սրտի խօսքով հանդէս եկաւ Հ.Ք. վարժարանի տնօրէնուհի? Առաքինազարդ Քոյր Լուսիա, որ իր գոհունակութիւնը յայտնեց ի տես Ծննդեան շարականներու փոքրերու կողմէ այնքան անմեղ եւ հարազատ մեկնաբանութեան եւ տօնական օրերու բարեմաղթութիւններով փակեց հանդիսութիւնը:

Դեկտեմբեր 20-ի երեկոյեան տեղի ունեցաւ նախակրթարանի երգահանդէսը, որուն ներկայ էին Հիւսիսային Ամեկիկայի եւ Գանատայի Կաթողիկէ համայնքի Առաջնորդ՝ Արհիեպատիւ Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեան, Կլէնտէյլի Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ժողովրդապետ Հայր Գրիգոր Շահինեան, Հայր Անտոն վարդապետ Նորատունկեան, առաւել հիւրեր ծնողներ եւ մեծ թիւով հանդիսատեսներ:

Հանդիսութիւնը սկսաւ Տնօրէնուհի Քոյր Լուսիայի օրուան պատշաճ բացման խօսքով, Ան ողջունեց ներկաները եւ իր սրտի գոհունակութիւնը յայտնեց որ «Աշխարհի Փրկչին» Ծննդեան տօնը պատշաճ ձեւով կը տօնենք վարժարանէն ներս:

Բացման խօսքէն ետք հանդիսութիւնը ընթացք առաւ, ան բաժնուած էր չորս մասերու. նախ՝ փոքր դասարանի աշակերտները խորհրդաւոր մթութեան մէջ, ձեռքերնին վառուած մոմերով ու երգելով մուտք գործեցին , նախապատրաստելով հանդիսատեսը եւ ստեղծե-

Շար.ը էջ 17

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԷՍ

Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանը 22 Դեկտեմբեր 2012, Շաբաթ օր բացառիկ ծրագիրով տօնեց Նոր Տարին:

Այդ օր աշակերտները նախ ուղղուեցան եկեղեցի: Անոնք Սարգիս Աւագ. Քհնյ. Փեթոյանէն լսեցին քարոզ, որ փոքրիկներուն հասկնալի լեզուով ու օրինակներով տուաւ Ս. Ծնունդին իմաստը: Աշակերտները ապա խորանի վրայ կատարեցին շարականներ եւ ստացան Ս. Հաղորդութիւն: Իսկ դպրոցական սրահի տօնական մթնոլորտին մէջ անոնք հայերէն երգերով եւ արտասանութիւններով տօնեցին Ամանորը: Անոնք նաեւ վայելեցին իրենց ծնողներուն պատրաստած հայկական աւանդական սեղանը, որ ճոխ էր տոհմիկ ուտեստեղէններով:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը իր հինգ դասարաններով կը ծառայէ Ս. Կապրիէլ Հովիտի 5-13 տարեկան հայորդիներուն: Դպրոցը մայրենիի դասաւանդութեան քով իր աշակերտները կը սնուցանէ ազգային մշակոյթով եւ արժէքներով:

ՍԷՐԸ ԿԸ ԳՐԱՒԷ՞ ՔԵԶ

Կը սիրես զի՞նք ուրախացնել թէ ինքզինքդ կը ջնջես իրեն համար: Հաճոյք կը զգա՞ս իր հետ գտնուելով թէ կը վախնաս իրմէ բաժնուելէ: Վիճակներուն հետ կ՚ընտելանա՞ս թէ կը մերժես իր կարծիքը: Սիրոյ եւ կապուածութեան միջեւ սահմանը շատ բարակ թել մըն է: Այս փորձ-քննութեան հարցարանը կ՚օգնէ քեզի՝ անոնց միջեւ զանազանելու:

1) Ամուսինդ մէկ ամիս պիտի բացակայի, ինչպէ՞ս կ՚ապրիս այս բացակայութիւնը.

Ա) Այս ժամանակը կ՚օգտագործես մտածելու նախապէս չկատարածդ կատարելու մասին:

Բ) Սկզբունքով շատ փոփոխութիւններ չկան:

Գ) Սրտիդ մէջ ցաւ կը զգաս եւ իր մասին խօսելէն զատ ոչինչ կ՚ընես:

2) Այպանում ունիս իրեն հանդէպ, զայն արտայայտելու ո՞ր ժամանակը կ՚ընտրես.

Ա) Երբ զգաս, թէ ինք հանդարտ է:

Բ) Երբ ան քու մասիդ հարցնէ:

Գ) Երբ դուն հանդարտ ըլլաս:

3) Օրուան ընթացքին մի քանի անգամ հեռաձայնելը քեզի

համար կը թուի.

Ա) Քիչ մը չափազանցուած:

Բ) Հաղորդակցութիւնը պահելու միջոց:

Գ) Անտրամաբանական, բայց շատ քաղցր:

4) Ո՞ր բաներուն մասին չես սիրեր արտայայտուիլ.

Ա) Որեւէ գաղտնիք չունիս:

Բ) Պզտիկ բաները, որոնք անկարեւոր են:

Գ) Սեռային երեւակայութիւնները, յիշատակներն ու ցանկութիւնները:

5) Քեզի համար իտէալական օրը.

Ա) Կողակիցիդ փակած մնալն է:

Բ) Իրեն յատուկ օր մը պատրաստելն է:

Գ) Ինքզինքիդ մասին մտածելն է, առանց երկրորդ կէսդ մոռնալու:

6) Խրախճանքի ընթացքին կը տեսնես, որ կողակիցդ որոշ

ժամանակի համար կը խօսի ու կը խնդայ քեզի անծանօթ կնկայ մը հետ, ի՞նչ կը զգաս.

Ա) Նախանձ եւ անվստահութիւն:

Բ) Վախ եւ ցաւ:

Գ) Հետաքրքրութիւն եւ ուշադրութիւն:

7) Ի՞նչ բանը չես կրնար ընել.

Ա) Կարծիքդ փոխել՝ հարցէ խուսափելու համար:

Բ) Արձակուրդի երթալ՝ առանց ամուսինիդ:

Գ) Իր դէմ կենալ՝ ուրիշներուն ներկայութեան:

8) Քեզի համար ի՞նչ կը նշանակէ «ուրիշին հոգ տանիլ».

Ա) Իր անհրաժեշտութիւններն ու ցանկութիւնները քեզիններէն գերադասել:

Բ) Իր տարակարծութիւնը փորձել յարգել:

Գ) Պատասխանատուութիւն կրել:

9) Դուն իրաւունքով ես, բայց ան չ՚ուզեր զիջիլ.

Ա) Այս մէկը հարց է քեզի համար, բայց չես յանձնուիր:

Բ) Կը փորձես միջին լուծում գտնել:

Գ) Դիրքդ կը լքես՝ մեծ վիճաբանութենէ խուսափելու համար:

10) Բարեկամներուդ կը հանդիպիս.

Ա) Կանոնաւոր կերպով եւ մեծաւ մասամբ առանց կողակիցիդ:

Բ) Նուազ չափով, ամուսնանալէդ ետք:

Գ) Առանց ամուսնոյդ երբեք չես հանդիպիր իրենց հետ, նկատի առած ըլլալով, որ ինքն ալ բարեկամ է անոնց:

11) Ո՞ր ժամանակներուն ինքզինքդ աւելի սիրուած կը զգաս.

Ա) Սեռային յարաբերութեան ժամանակ՝ մարմնային եւ զգացական միաձուլման ընթացքին:

Բ) Քեզի համար անոր կատարած զիջումներուն ընթացքին:

Գ) Երբ զգաս, թէ ինք կը յարգէ ու կ՚արժեւորէ քեզ:

12) Հետաքրքիր բնաւորութիւնդ կը քննադատէ, ինչպէ՞ս կը վարուիս.

Ա) Խօսք կու տաս անոր, որ իր հարցերուն պիտի չխառնուիս այլեւս:

Բ) Խորապէս ներողամտութիւն կը հայցես եւ կը խոստանաս ապագային աւելի լուռ մնալ:

Գ) Պատրաստ ես ինքզինքդ հաշուեյարդարի ենթարկելու, բայց փաստեր կը պահանջես:

13) Ի՞նչ է ամուրի ըլլալու օգուտը.

Ա) Օգուտ չունի, ամուրիութիւնը մտահոգութիւն կը

պատճառէ քեզի:

Բ) Անհոգ ապրելու հմայքը:

Գ) Նիւթապէս եւ բարոյապէս անկախ կեանք ապրելու առիթը ունենալ:

Արդիւնքները.-

** Եթէ պատասխաններուդ մեծամասնութիւնը (Ա) է.- Հոգիով կապուած ըլլալը քեզի համար իսկական սիրոյ արտայայտութիւնն է, որ կը բարձրացնէ մարդ արարածը, կը բարելաւէ զինք եւ անոր թեւեր կու տայ: Յատուկ ուրիշով եւ ուրիշին համար ապրիլը կրնայ քու անգիտակցութեանդ մէջ բնակող նպատակը ըլլալ: Բաժանումը չես ընդունիր եւ նախանձդ կը բոցավառի հազիւ նկատես, թէ ամուսինիդ նայուածքը ուրիշ կողմ կը շեղի:*

Քեզի համար յոռեգոյն մղձաւանջը բաժանումն է, զոր դժբախտաբար կ՚ապրիս ամէն վիճաբանութեան կամ հոգատարութեան նուազումի պզտիկ նշանի հետ, ու դուն կը խեղդուիս մտահոգութեան զգացումներդ, եւ թոյլ տուր, որ ան միշտ զգայ իր իգականութիւնը: Գովէ իր մէջ գտնուող իգական բոլոր իմաստները՝ գեղեցկութիւնը, նրբութիւնը, սէրը, զուրգուրանքը եւ հաւատարմութիւնը:

Շատ կարեւոր է, որ գիտնաս անոր կենսաբանական վերիվայրումները (դաշտան, յղութիւն եւ ծննդաբերութիւն) եւ նկատի առնես այս պարագաներուն ընթացքին անոր հոգեվիճակները, եւ դուն ալ, քու կարգիդ, իշխես ունեցած բացասական զգացումներուդ վրայ, մանաւանդ ջղայնութեան պահուն: Փորձէ այդ պարագաներուն մէջ բացատրութիւն եւ ներելու պատճառ գտնել:

Ի վերջոյ, հետեւիր այս առնչութեամբ տրուած խրատներուն.

1) Զգոյշ եղիր դրամի, զգացումներու կամ սեռային յարաբերութիւններու մէջ ժլատութենէ:

2) Զուարճութեան եւ լրջութեան, թուլութեան եւ վճռակամութեան, երեւակայութեան եւ իրականութեան միջեւ հաւասարակշռութիւնը պահէ:

3) Ապահով զգացուր զինք, որովհետեւ այս մէկը առհասարակ բոլորին եւ մանաւանդ կին արարածին մօտ բնածին անհրաժեշտութիւն մըն է:

4) Դրամի սակաւութիւնը պատճառաբանութիւն մի բներ, որովհետեւ ռոմանթիք ըլլալը միակ բանն է, որ այդքան դրամի պէտք չունի:

ԿՆԿԱՆ ՍԻՐՏԸ ԻՆՉՊԷ՞Ս ՇԱՀԻԼ

Շատ ձեւեր կ՚օգնեն սիրած կնկանդ սիրտը շահելու եւ քեզի հանդէպ իր զգացումները աւելցնելու: Նախ, պէտք է հասկնալ անոր անհատականութեան բնոյթը, որովհետեւ իւրաքանչիւր անհատականութիւն ունի իր բանալիները, որոնք կը դիւրացնեն զայն եւ անոր աճման պայմանները հասկնալը եւ անոր հետ վերաբերիլը, որովհետեւ անոր ընտանեկան կառուցուածքը, անոր անդամներուն միջեւ յարաբերութեան ոճը եւ այդ անդամներուն բնաւորութիւնները մեծ ազդեցութիւն ունին սիրած անձիդ անհատականութեան եւ անոր ներկայի վարքագիծին վրայ: Երկրորդ, ընդունիլ զինք, հակառակ անոր մօտ գոյութիւն ունեցող կարգ մը թերութիւններուն, որովհետեւ չկայ անթերի մարդ արարած այս երկրագունդին վրայ, եւ անպայման պակաս բան մը պիտի գտնես ուեւէ կնկայ մէջ, նոյնիսկ եթէ աշխարհի բոլոր կիները մէկ-մէկ ցուցադրուին առջեւդ:

Լաւ ուշադրութիւն ըրէ, որ շատ չքննադատես զինք, որովհետեւ ոչ ոք կը սիրէ շատ քննադատութիւն լսել (նոյնիսկ եթէ տեղին քննադատութիւններ են), քանի որ այդ մէկը ապացոյց է մերժողութեան եւ բացթողում՝ քեզմէ ակնկալած առանց պայմանի սիրոյ մէջ: Ընդհակառակը, առանց ամչնալու եւ անվերապահօրէն ցոյց տուր անոր հանդէպ ունեցած դրական զգացումներդ, եւ թոյլ տուր, որ ան միշտ զգայ իր իգականութիւնը: Գովէ իր մէջ գտնուող իգական բոլոր իմաստները՝ գեղեցկութիւնը, նրբութիւնը, սէրը, զուրգուրանքը եւ հաւատարմութիւնը:

Շատ կարեւոր է, որ գիտնաս անոր կենսաբանական վերիվայրումները (դաշտան, յղութիւն եւ ծննդաբերութիւն) եւ նկատի առնես այս պարագաներուն ընթացքին անոր հոգեվիճակները, եւ դուն ալ, քու կարգիդ, իշխես ունեցած բացասական զգացումներուդ վրայ, մանաւանդ ջղայնութեան պահուն: Փորձէ այդ պարագաներուն մէջ բացատրութիւն եւ ներելու պատճառ գտնել:

Ի վերջոյ, հետեւիր այս առնչութեամբ տրուած խրատներուն.

1) Զգոյշ եղիր դրամի, զգացումներու կամ սեռային յարաբերութիւններու մէջ ժլատութենէ:

2) Զուարճութեան եւ լրջութեան, թուլութեան եւ վճռակամութեան, երեւակայութեան եւ իրականութեան միջեւ հաւասարակշռութիւնը պահէ:

3) Ապահով զգացուր զինք, որովհետեւ այս մէկը առհասարակ բոլորին եւ մանաւանդ կին արարածին մօտ բնածին անհրաժեշտութիւն մըն է:

4) Դրամի սակաւութիւնը պատճառաբանութիւն մի բներ, որովհետեւ ռոմանթիք ըլլալը միակ բանն է, որ այդքան դրամի պէտք չունի:

ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐԸ ԵՒ ՊՏՈՒՂՆԵՐԸ ԿԸ ՆՊԱՍՏԵՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐՁՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ

Բանջարեղէններու եւ պտուղներու օգուտները այնքան շատ են, որ զանոնք անպայման պէտք է ներառել մնդականոնէն ներս: Այս գծով գիտական առաջին ուսումնասիրութիւններն իսկ յայտնաբերած են, թէ բանջարեղէնները եւ պտուղները որպէս դեղամիջոց կարելի է օգտագործել մարմնի դիմադրողականութիւնը բարելաւելու եւ անհանգստութիւններու դէմ պայքարելու համար: Սակայն հե- տաքրքրական է, թէ բանջարեղէնները եւ պտուղները նաեւ կը նպաստեն հոգեկան առողջութեան: Մասնագէտներ կը պնդեն, թէ մնդականոնը ուղղակի ազդեցութիւն կրնայ ունենալ մեր տրամադրութեան վրայ: Բրիտանացի գիտնականներու վերջերս կատարած ուսումնասիրութիւնը կը հաստատէ այս տեսութիւնը:

Ըստ ուսումնասիրութեան, ուղղակի կապ գոյութիւն ունի բանջարեղէններու եւ պտուղներու նախընտրութեան եւ ուրախութեան, գոհունակութեան եւ հոգեկան առողջութեան միջեւ: Այս ընդարձակ ուսումնասիրութիւնը կատարուած է 80 հազար բրիտանացիներու մասնակցութեամբ: Ուսումնասիրութեան պարագային ամենէն ուրախ մասնակիցները անոնք են, որոնք օրական 595 կրամ պտուղ կամ բանջարեղէն կը սպառեն: Այս արդիւնքները անկախ են բանջարեղէնի կամ պտուղի տեսակէն: Ուսումնասիրութեան գիտնականները կը շեշտեն, որ պտուղներու եւ բանջարեղէններու սպառումը կրնայ բարձրացնել նաեւ անհանգիստ անձերու տրամադրութիւնը:

Շար.ը էջ 19

ՍԱԿԱՒԱԹԻՒ ԳԱՂԹ ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ...

Շարունակուած էջ 6-էն

կան դասընթացքերուն: Ինչ կը վերաբերի բնակեցման հարցին, աշխատանք տարուած է կուսակցական կեդրոններու եւ եկեղեցիներու միջոցաւ տուներ վարձել Պուրճ Համմուտի եւ մօտակայ շրջաններու մէջ, ինչպէս նաեւ կարելիութիւններ ստեղծուած են, ընդունելի վարձքերով տեղ հայթայթել, որպէսզի ընտանիքներ վայել բնակարաններ ունենան: Հայ Երեսփոխանական Գրասենեակը այս առումով նիւթական յատկացումներ կատարած է: Առողջապահութեան նկատմամբ, դեղեր կ'ապահովուին կարգ մը անմիջական նկատուող հիւանդութիւններու, օժանդակութեամբ Լիբանանի պետական առողջապահութեան նախարարութեան եւ բարեսիրական հաստատութիւններու եւ միութիւններու: Եւ որովհետեւ ապրուստի դժուար պայմաններու մէջ են արդէն լիբանանահայ ընտանիքները որոնք կը հիւրասիրեն գաղթական Սուրիահայերը, անոնցմէ շատեր նիւթական նպաստ եւ ձրի սննդամթերք կը ստանան որպէսզի կարողանան շարունակել իրենց հիւրասիրութիւնը:

ՀԱԼԷՊԻ ՄԷՋ ԴԻՄԱՑՈՂՆԵՐԸ

Սուրիահայութեան մեծամասնութիւնը տակաւին կը մնայ Հալէպի մէջ եւ Սուրիոյ միւս շրջաններուն մէջ, հակառակ ամէն տեսակի դժուարութիւններուն եւ դէպքերուն, որովհետեւ անոնք կառչած կը մնան իրենց հողին, տունին, ինչքերուն եւ խանութներուն: Անոնք վաճառականներ, շինարարներ, եւ արհեստաւորներ են որ կը կազմեն հիմնական մաս մը սուրիական տնտեսական եւ ընկերային Մոզայիքին, եւ կ'ուզեն մնալ որպէսզի պաշտպանեն ու պահեն իրենց վաճառատուներն ու գործարանները, որոնցմէ շատեր կողոպուտի եւ աւերի ենթարկուեցան, ինչպէս անոնք մեզի կը հաղորդեն: Միւս կողմէ, սուրիահայերը կը յամառին մնալ Սուրիոյ մէջ զայն նկատելով նաեւ իրենց մեծ հայրերու դարաւոր հողը ցեղասպանութենէն ալ առաջ եւ դարերու վրայ երկարած. եւ եթէ դժուար պարագաները պարտադրեցին իրենց հեռանալ ժամանակաւորապէս դէպի Հայաստան կամ Լիբանան, ինչ որ կը նշանակէ մնալ Միջին Արեւելքի մէջ մինչեւ Սուրիոյ մէջ խաղաղութեան հաստատումը, ապա անոնք կը մերժեն գաղթել Աւստրալիա կամ Ամերիկա որպէսզի պահեն, պահպանեն եւ խաղան Քրիստոնէութեան դերը Միջին Արեւելքի մէջ, ուրիշ հիմնական ազգակներու կողքին, որոնցմէ ամենէն յատկանշականը կարելի է նկատել անոնց հոգեւոր պետերու յորդորը որ չմեկնին, նիւթական աննպաստ պայմանները, եւ գաղթին հետ ծնող անապահով զգացումը:

ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սուրիոյ դէպքերու սկիզբէն առաջ, Լիբանանի մէջ հիմնուեցան չորս (4) հայկական բարեսիրական միութիւններ որոնք հայերու ընկերային եւ առողջապահական պէտքերը կը հոգային: Անոնցմէ ամէն մէկը մասնաճիւղեր ունի Լիբանանէն դուրս ինչպէս Հալէպ եւ Սուրիա: Այս պատճառաւ կարելի դարձաւ արագ գործակցութեան կարգավիճակ մը, որ կարելի դարձուց ճանչնալու Սուրիոյ հայութեան վիճակը, առողջապահական, ընկերային եւ բնակարանային կարիքներու անկիւններէն դիտուած: «Ան Նահար» օրաթերթի հետ ունեցած իր հանդիպումի ընթացքին, բարեսիրական միութիւններու համադրիչ՝ Պրն. Աւետիս Կիտանեան, յայտնեց թէ գործակցութիւն ստեղծուած է առայժմ երեք (3) միութիւններու եւ կազմակերպութիւններու հետ որոնք են:- «Գաղթականներու Վերին Մարմին», «Բժիշկներ Առանց Սահմանի» եւ «Ալ Մախզումի Հիմնարկ» գրասենեակը որ արտօնութիւն ստացած է Գաղթականներու Վերին Մարմինէն համաձայնագրեր կնքելու հիւանդանոցներու եւ բուժարաններու հետ եւ սննդամթերքի կտրոններ բաժնելու: Ան յայտնեց թէ հիմնական հարցը կը կայանայ բնակեցման հարցին մէջ, որովհետեւ գաղթականներու մեծ մասը կ'ապրի որպէս հիւր իր ընտանեկան պարագաներու, ազգականներու կամ բարեկամներու մօտ, որոնք արդէն կը տառապին նիւթական նեղ վիճակներէ եւ որ «պէլային վրայ պէլա մը եւս կ'աւելցնէ»: Ձրի դպրոց եւ բժշկութիւն ընծայելու լուծում գտնելը վիճակուած է միութիւններուն, ինչպէս նաեւ ծննդաբերութեան եւ արագ ապաքինումի (Emergency) հիւանդանոցի խնամքին հետ առնչուող ծախսերը: Այս պարագաներուն, Գաղթականներու Վերին Մարմնին հետ կապ կը հաստատուի որ կը հոգայ բժշկական ծախսերուն ութսուն հինգ առ հարիւրը (85%) պայմանաւ որ հիւանդը արձանագրուած ըլլայ իր անուանացանկին վրայ (թէեւ անուններու արձանագրութիւնը յետաձգուած է մինչեւ յաջորդ Ապրիլին): Պրն. Կիտանեան կը հաստատէ թէ Լիբանանեան կառավարութիւնը որեւէ օգնութիւն տուած չէ գաղթականներուն որոնք հաստատուեցան սահմանամերձ Պէքա'այի եւ Հիւսիսային Լիբանանի շրջաններուն մէջ: Սակայն երբ անոնք երկրէն ներս թափանցեցին, վիճակը փոխուեցաւ, եւ Ընկերային Հարցերու Նախարար՝ Ուա'էլ Ապու Ֆա'ուր շրջանի ներկայացուցիչ պատասխանատուն դրկեց հետաքրքրուելու անոնց պէտքերով: Պետական պիւտճէի չգոյութեան պատճառաւ, ծախսերը մեծապէս կը հոգացուին Գաղթականներու Վերին Մարմնին կողմէ որ ստուգելէ ետք իր անուանացանկի վրայ արձանագրուածները, անոնց կուտայ դպրոցի կրթաթոշակ կամ ամսական անձի գլուխ 31 տոլարնոց սնունդի կտրոն: Նկատի ունենալով Սուրիոյ քաղաքական եւ զինուորական անորոշ եւ պղտոր վիճակը, հարցը հետեւեալն է: Մինչեւ ե՞րբ այս միութիւններն ու կուսակցութիւնները Լիբանանի մէջ կրնան շարունակել թիկունք կանգնիլ եւ ընծայել օժանդակութիւն ու օգնութիւն: Ի՞նչ պիտի ըլլայ վիճակը երբ Սուրիոյ հարցը աւելի գէշնայ եւ գաղթականներու աւելորդ թիւեր ստիպուին Լիբանան ապաստանիլ: Ո՞վ պիտի ստանձնէ եւ վերցնէ պատասխանատուութիւնն ու բեռը այն ժամանակ:

ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 15-էն

լով օրուան պատշաճ մթնոլորտ մը, ապա մթութեան մէջ հնչեց անոնց մեղմիկ բայց զուարթ աւետումը Քրիստոսի յայտնութեան, անոնք երկչեզու մեկնաբանեցին ծննդեան եւ կաղանդի երգեր:

Հանդիսութիւնը շարունակուեցաւ Երրորդ դասարանի երգեցողութեամբ, որոնք փոթորիկի պէս գրաւեցին բեմահարթակը իրենց հաւայեան տարազներով, զանազան երաժշտական գործիքներու օգտագործումով, անոնք, Ամանորեան եւ Ս. Ծննդեան երգերը եւ շարականները երեք լեզուներով եւ արդիական ձեւով մեկնաբանեցին, բեմին վրայ ներկայութիւն էր եւ տարբեր գոյն կուտար «հաւայեան կղզիներ արձակուրդի գացած» երիտասարդ եւ արդիական կաղանդ պապան, որ մեծ յաջողութեամբ, Հաւայեան պարերով եւ շարժուձեւերով կը ներկայացնէր Ութերորդ դասարանէն, Շանթ Փափիրեանը, ցուցաբերելով իր բեմական կարողութիւնները:

Երրորդ մասով բեմ բարձրացան հինգերորդ Վեցերորդ եւ Եօթներորդ դասարաններու աշակերտները, երգելով «Խորհուրդ Մեծ եւ Սքանչելի» շարականը, նախորդներու անմեղունակ եւ եռանդուն մեկնաբանութեան տեղի տալով աւելի գիտակից եւ ապրումով երգեցողութիւն: Կաղանդի աշխոյժ երգերն ու Ծննդեան շարականները, որոնք յաճախ երեք լեզուներով ներկայացուեցան, համեմուեցան մեներգներով, իրլանտական ռիթմիկ շարժումներով, որոնք սովորական երգերը դարձուցին աւելի հետաքրքրական եւ հաճելի, մանաւանդ վերջին բաժնով երբ Մեղեդի Տէր Պողոսեան արդի ոճով ներկայացուց ,Hip Hop Reindeerեը մեծ խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն մէջ: Յիշենք որ այս բաժնի տեւողութեան Եօթներորդ դասարանէն Կարեն Քէչէճեան կը ներկայացներ եւ կը բացատրէր ներկայացուած երգերը:

Հանդիսութիւնը չէր վերջացած կարծես նոր կը սկսէր երբ Զորրորդ դասարանը գրաւեց բեմը, անոնք լրիւ դասարանով ներկայացուցին ,Elvis and The Sleigh Rideեն երգախառն թատրոնը:

Երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեան ճշգրտօրէն կրցած էր ընտրել իւրաքանչիւր աշակերտի դերը, իսկ իւրաքանչիւր աշակերտ կրցած էր իրեն վստահուածը կատարեալ ձեւով ներկայացնել՝ երգելով, պարելով, արտասանելով եւ մեկնաբանելով, իսկապէս հրաշք են նոր սերունդի երեխաները... պատրաստութիւնը թէեւ բաւական ժամանակ եւ կեդրոնացում խլած էր ուսուցիչներէն, աշակերտներէն եւ միաժամանակ ծնողներէն, բայց ներկայացուածը կատարեալ արուեստի գործ էր, կարծես մասնագիտացած դերասաններու կողմէ ներկայացուած ըլլար:

Թէեւ բոլոր աշակերտներն ալ կատարեալ ներկայացան բայց կարելի չէ բոլորը առանձնաբար յիշատակել, սակայն կարելի է յիշել գլխաւոր դերակատարներէն Ատիս Հարմանտեանը՝ Էլվիսը մարմնացնող, Մհէր Մաթիւն՝ իր հագուածքով եւ պարերով, կաղանդ Պապան եւ Մաման սահնակով, որոնք անբացատրելի երաժշտական մթնոլորտ մը ստեղծեցին, միաժամանակ փոխանցելով ներկաներուն Ծննդեան խորհուրդը, վերարժեւորելով քրիստոնէական բարոյական արժէքներ:

Հանդիսութիւնը համալրուեցաւ երբ սոյն խումբին միացաւ հինգերորդ, վեցերորդ եւ եօթերորդ դասարաններու աշակերտներ եւ մեծ խանդավառութեամբ ամփոփ ձեւով երգեցին բոլոր կաղանդի երգերը սրահի խանդավառութիւնը հասցնելով գագաթնակէտին:

Երկու ժամ տեւողութեամբ հանդիսութիւն մը էր, որու աւարտին Տնօրէնուհի Քոյր Լուսիա բեմ հրաւիրեց Արհիապատիւ Գերապայծառ Տէրը, որ մեծ ուրախութեամբ շնորհակալութիւն յայտնեց Տիկ.Վարդուհիին, բոլոր ուսուցիչներուն եւ յատկապէս աշակերտներուն, որոնք մեզի ապրեցուցին գեղեցիկ Ծննդեան երեկոյ մը եւ աւելցուց «...Ծննդեան տօնը մանուկներու տօն է, մենք բոլորս ալ կը մանկանանք, ինչպէս որ Քրիստոս մանկացաւ, որպէսզի հասկնանք Քրիստոսի Ծնունդը, հակառակ գոյութիւն ունեցող պատերազմներուն փորձենք ապրիլ սիրով եւ այս փոքրերուն երգով տրուած պատգամը թող տեղ գտնէ մեզմէ իւրաքանչիւրի հոգիին մէջ»...:

Տնօրէնութեան, ուսուցչական կազմի, ծնողներու եւ աշակերտութեան համագործակցութեամբ իրականացած գեղարուեստական սքանչելի երեկոյ մը, որ կ'արդարացնէր Հայ Քոյրերու վարժարանի քրիստոնէական դաստիարակութեան սկզբունքը, աշակերտները պահելով հայ՝ խօսքի, երգի եւ շարականի երգեցողութեան մթնոլորտի մէջ, ի գոհունակութիւն դաստիարակին եւ ծնողքին:

ՉՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՕԼԻԳԱՐԽԻԿ ՉԱՐԻՔԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 2-էն

ւոր, բայց նշանակալի յաղթանակների: Մաշտոցի պուրակի պայքարը, բնապահպանական շարժումը, Վահէ Աւետեանի հետ կապուած շարժումները եւ այլն: Իւրաքանչիւրը իր առջեւ դրել է մի կոնկրետ խնդիր եւ ջանասիրաբար, հետեւողականօրէն ու սկզբունքայնօրէն մղուած է այն լուծելու: Նկատենք մի կարեւոր հանգամանք, որ բոլոր խնդիրները ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն կապուած են օլիգարխիայի հետ: Այսինքն, ինչպէս էլ շուռ ենք գալիս բախւում ենք օլիգարխիային: Խնդիրը օլիգարխիան է: Հակառակորդը օլիգարխիան է:

Այս շարժումները դեռ միայն սկիզբն են, եւ պէտք է նշել, որ բացակայում են թէ նրանցում համաժողովրդական մասնակցութիւնը, եւ թէ միասնական նպատակը: Այս առումով յիշարժան է մէկ այլ քաղաքացիական նախաձեռնութիւն՝ «Սարդարապատ» շարժման նախաձեռնած այլընտրանքային խորհրդարանի եւ կառավարութեան ստեղծման գործընթացը: Ըստ ծրագրի՝ այլընտրանքային կառոյցների հիմք են հանդիսանալու բաց, ազատ եւ արդար ընտրութիւնները: Նկատենք, որ այստեղ նոյնպէս խնդիրը կոնկրետ է դրուած, բայց ի տարբերութիւն այլ նախաձեռնութիւնների՝ եւ խնդիրը, եւ առաջադրուած լուծումը գլոբալ եւ համապարփակ են: Այս առումով նախաձեռնութիւնը կամ գոնէ դրա հիմքում դրուած այլընտրանքային իշխանական համակարգի գաղափարը կարող է հանդիսանալ որպէս բոլոր քաղաքացիական նախաձեռնութիւնների համագործակցութեան պլատֆորմ եւ միաւորման յենակէտ:

Ակնկալենք, որ այս շարժումները բնականօրէն կը զարգանան եւ կը հասունանան: Ինչպիսի ուղիով էլ զարգացումը ընթանայ եւ անկախ նրանից, թէ ինչպէս նրանք կը հանեն բաւարար մասսայականութեան համակարգային փոփոխութիւններ իրագործելու համար, մի բան արդէն իսկ ակնյայտ է դարձել, որ օլիգարխիայի դէմ պայքարում քաղաքացիական շարժումները անփոխարինելի են եւ դեռ ասելիքներ շատ ունեն: Ցոյս յայտնենք, որ մօտ ապագայում դրանք կ՚ընդլայնուեն եւ ի զօրու կը լինեն բացարձակապէս մեկուսացնել այս չարաբաստիկ հայկական օլիգարխիան, քանի դեռ ուշ չէ:

«ԼՐԱԳԻՐ»

ՀԱԼԷՊ ԿԸ ԾՆԻՆ

Շարունակուած էջ 7-էն

գային վարժարանի առաքելութիւնը Նիւ Եորքի մէջ կրնայ նմանիլ Աստուածաշունչի Դաւիթի եւ Գողիաթի անհաւասար ուժերու մենամարտին...:

Հուրի Ղուկասեանը կու գայ Պէյրութէն եւ հայերէնի ու հայոց պատմութեան ուսուցիչն է...: Երբ լսեցի հայ պատանիին հայերէն արտասանութիւնը եւ թէ ինչպէս անոնք սորված էին հայ ժողովուրդի պատմութիւնն ու անոր կազմաւորումը՝ անդրադարձայ այն իրականութեան, որ Դաւիթը՝ իր անհաւասար մենամարտին եւ ուժին ու կարողականութեան մէջ՝ նաեւ յաղթեց Գողիաթին...:

Բայց հայուն փորձը այս չէ արդեօ՞ք...: Անհաւասար «մենամարտ» ու «պայքար»ի իր պատմութեան շատ մը հոլովոյթներուն մէջ...: Ու այս անհաւասար ճակատներուն վրայ, եթէ հայը պարտուեցաւ, բայց դարձեալ ոտքի ելաւ...: Եթէ կործանեցաւ, նորէն չինեց: Եւ եթէ մեռաւ, առիթը ստեղծեց, որ յաջորդները ապրին ու շարունակեն...: Եւ այս բոլորը կրցաւ ընել հայը, քանի հաւատաց հայապահպանումի տեսլականին: Ինքնութեան կանչը իր սրտին ու հոգիին մէջ, հայուն անհաւասար մենամարտը կը շարունակուի...: Բայց նաեւ Նիւ Եորքի մէջ...:

Զարմինէն եւ իր փոքր «գումարտակը»՝ Հուրին, Անին, Մարոն եւ Քրիսթինը՝ Հալէպէն, Պէյրութէն, Երուսաղէմէն ու տակաւին... Նիւ Եորքէն՝ կը շարունակեն նուիրումով այս անհաւասար «մենամարտը»...:

Բայց հայուն գոյապայքարի մէկ մեծ մարտահրաւէրն է այս:

Նոյնիսկ երբ Հալէպ (կամ այլ) կը ծնի, Պէյրութ (թէ ուրիշ տեղ) կ՚ապրի եւ Ամերիկա (ու տակաւին) կը մեռնի...:

Հայուն կատակ-յուզումն է այս իրականութիւնը: Թէ պէտք է շարունակել ապրիլ «հայկական կեանքը» Հալէպ, Պէյրութ, Ամերիկա թէ այլ տեղ...:

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Շարունակուած էջ 14-էն

համար կը մենին Մոսկուա: Արփենիկը կ՚աւարտէ Մոսկուայի եւ Լենինկրատի մանկավարժական համալսարանները, վայելելով ժամանակի մտաւորականներուն յարգանքն ու համակրանքը: Զարենց կ՚ուսանէր Մոսկուայի Վալերի Բրուսովի ղեկավարած գրականութեան ամպիոնին մէջ, ապրելով համալսարանը, ուրկէ կը փոխադրուին հայոց եկեղեցին, ստանալով չնչին կրթաթոշակ:

Եղիշէ Զարենցի յուշակոթողը, Երեւանի Օղակաձեւ զբօսայգիին մէջ Զարենցի քերթուածներուն մէջ իր յատուկ տեղը ունի »Ես իմ Անուշ Հայաստանի«ն, որ Մարտիրոս Սարեանի հիացական վերլուծումին ենթարկուած է: Մեծահամբաւ նկարիչը այդ մասին կ՚ըսէ.- «Ինձ թւում է թէ Սահակի եւ Մեսրոպի հետ է եկել: Դա մեր այսօրուայ աղօթքն է: «Ես իմ Անուշ»ը քիչ կ՚ըլլայ ըսել թէ բանաստեղծութիւն է: Պոէմ ալ չէ, վէպ՝ նոյնպէս: Դա անյիշելի ժամանակներից եկող Հայաստա-Ուրարտա-Արմենիա երկրի համապարփակ դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրութեան ու վարքի կենդանի արտացոլքն է, մեր կրած տառապանքների ու փայփայած իտէալների, մեր անկումների ու վերելքների, արհաւիրքների ենթակայ մեր ճակատագրի եւ անմեռ մնալու մեր ձգտման գեղարուեստական սինթէզն ու բիւրեղացումն է: Այդպիսի երկ աշխարհ բերելու համար պէտք է ամենաքիչը կիսաստուած լինել»:

Աւետիք Իսահակեան կ՚ըսէ.- Հայ տառերով եւ հայ բառերով այդպիսի բանաստեղծութիւն չէ գրուած հայրենասիրական տեսակէտից: Նոյնիսկ կարելի է ասել, որ եւրոպական-համաշխարհային գրականութեան մէջ հայրենասիրական ժանրի բանաստեղծութիւն այդպիսի թափով չէ գրուած, գոնէ ես չեմ յիշում:

Ուիլիըմ Սարոյեան կ՚ըսէ.- Զարենցը... Զարենցը... «Ես իմ Անուշ Հայաստանի Արեւահամ Բառն եմ Սիրում»: Անոր չհանդիպած գիտէի արդէն իր այս քերթուածը: Ամէն մէկ բառ բացատրել տուած ու գրեթէ գոց սորված էի: Զայն մինչեւ այսօր կը նկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմութեան նուիրուած ամէնէն գեղեցիկ երգը, գովաբանական աղօթքը: «Հայր Մեր»ին նմանող աղօթք մը:

Զարենցի անմեռ յիշատակին նուիրուած այս համեստ ներբողականը աւարտենք ինքնաճանաչումի իր մարգարէական նախազգացումով.- «Ես եկել եմ դարերից ու գնում եմ յաղթական, դէպի դարերը նորից՝ դէպի վառուող Ապագան»:

ԲԱՅՑ ՄԵՆՔ ՀՈ՛Ս ԵՆՔ

Շարունակուած էջ 14-էն

ցող
Սուրիահայ ազգակիցներ,

Այսօր նուագուած ամէն մէկ խազ
Այսօր երգուած ամէն մէկ տող
Այսօր թափուած ամէն քրտինք
Եւ սպառած ամէն մէկ շունչ
Այսօր ծախսուած ամէն մէկ սէնթ
Եւ նուիրուած ամէն լումայ
Սիրայօժար եւ ինքնաբուխ
Զոհաբերուած, նուիրական
Ընծա՛յ է ձեր բարօրութեան
Եւ ձօնուած՝ ձեր խաղաղութեան

Այս երեկոյ, այս սրահէն ալի՜ք, ալի՜ք
Բարձրացող երգն ու երաժշտութիւնը
Պիտի հնչեն
Որպէս ղօղանջ զօրակցութեան
Որպէս մաղթանք լոյսի, յոյսի
Որպէս աղօթք խաղաղութեան

Եւ ամէն կանչ եւ աղաղակ, հրաւէ՛ր է
Ձիթենիի շիւղն կտուցին
Անարատեւ սպիտակ աղաւնիին
Որ գայ հանգչի բերդի ճակտին
Եկեղեցւոյ ծիր գմբէթին
Եւ թէ գագաթն մինարէթին:

Եւ թող յառնի Մայր Գաղութը Սփիւռքի
Թող փողփողի Ծիածանը երկնքի
Փայլատակէ երկնակամարն Սուրիական
Եւ թող խայտան նորածիններ երազկոտ
Որ տողանցեն նոր գալիքներ թռթռուն:

Բարարա՛մ
Բարարա՛մ
Բարարա՛մ
Բա՛մ..., բարարա՛մ
Բարարա՛մ
Բարարա՛մ
Բարարա՛մ
Բա՛մ... բարարա՛մ

Բայց մենք հո՛ս ենք
Սուրիահայ ազգակիցներ:

OFFICES FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

massispost.com
daily news updates

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս»
Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՍՐՏԻ ԽՕՍՔ՝ ՄԵԿՆՈՂ ՎԱՐԴԵՐԵՍԻՆ

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ

Իր մեկնումը այս կեանքէն եղաւ անաղմուկ ու աննշմար: «Ոչ փող զարկին եւ ոչ թմբուկ»

Բանաստեղծն ու բանաստեղծութիւնը միայն քնարերգութիւն եւ սիրերգութիւն չեն, թէեւ, անոնք ալ կարեւոր բաղկացուցիչներն են քերթողական արուեստին: Անոնք, տակաւին, վերացումի, քնքշանքի, երազանքի, արբշռանքի հրապոյր ու կախարդանք չեն լոկ, թէեւ ասոնք ալ բանաստեղծական համեմունքին եւ զինանոցին մաս կը կազմեն: Վերջապէս, հայրենասիրութեան փող-թմբկահարման գոռ հանդիսավայր չեն անոնք, թէեւ այս ալ, տեղին բացայայտուած՝ մտածումի եւ զգացումի զուսպ իր ձեւաւորումներով կրնայ կշռութաւորել ու էլեկտրականացնել պահը բանաստեղծական: Այս բոլորով եւ այս բոլորէն վեր սակայն, բանաստեղծութիւնը գեղեցիկ թեւաւորումով ընկալուած դժգոհութիւնն է, անբաւարարութիւնը բանաստեղծ մարդուն, զինք շրջապատող յոռի երեւոյթներուն ու կարգ ու սարքին դէմ որոնք անպայման մարդը արժեզրկող եւ անոր բարոյական դիմագիծը եղող ազդակներ կը հանդիսանան: Կարճ բառով՝ խորունկ մարդասիրութիւնն է անոր միակ լակը: Մարդը կատարեալ մարդկայնութեամբ տեսնելու տեսլականն է կոչումը քերթողին: Ահա՛ այսպիսի բանաստեղծ մըն էր Վարդերես Գարակէօզեան. եւ իր «Դեռ Չեմ Սպառել» հատորը այս հաստատումին փայլուն վկայութիւնն է: Առաջին տողէն մինչեւ վերջինը, Վարդերես Գարակէօզեան դժգոհ է իր շրջապատէն, շուկայի հոգեբանութեամբ վարակուած մարդոցմէն, նիւթականին հոգեկանին վրայ ճնշող բռնատիրութենէն եւ նոյնիսկ տիեզերական անհամակարգ համակարգէն: Շատ փոքր նմոյշ մը միայն պիտի բաւէ համոզելու մեզ իր ընդվզումի իրաւացիութեան:

Եթէ Սուտ Զեն Առաբեալները
Տիրոջ պիտի հնազանդուես
զի անզօր ես
պատգամները ճիշդ կատարես
տանար կերտես-խորան կապես
երկրպագես ու բուրվառես
պիտի հայցես ու պաղատիս
պիտի ծնես-շողոմորթես...
Թէ երկնաւորն է
այսման կոկոզ ու փառամոլ
երկրաւորից ի՞նչ կը սպասենք

Իր սուրբ դիտողականութիւնը, այս հատորին մէջ, կը սկսի մեր արմատացած սխալ ըմբռնումներուն եւ անոնց հետեւող վերաբերմունքին դատապարտութեամբ, այնքան դիպուկ եւ հեգնող զուարթախոհութեամբ տրուած: Հոս կրնամ խոստովանիլ, որ կեանքիս մէջ, բանաստեղծութիւն կարդալով այնքան չեմ խնդացած որքան Վարդերեսի «Նրանք եւ Մենք» շարքին ընթերցանութեան ընթացքին: Եւ ասիկա զուարճացնող խնդուք չէր, սիրելի բարեկամներ, այլ մեր անհեթեթութիւններուն գիտակցման անդրադարձ մը վարակիչ:

Սիրելի Վարդերես, քեզ սիրեցինք քու կարճ բայց հատու եւ նաեւ գեղապաշտ տողերուդ համար, քու զարտուղի թուացող բայց այնքան ճշմարիտ եւ յանդուգն մտածումներուդ եւ մօտեցումներուդ համար եւ վերջապէս, քու անսպառ, միշտ ներհուն հեգնանքզուարթախոհութեանդ համար: Յարգանք քեզի բանաստեղծ եղբայր, կեանքի յոռի երեւոյթներուն հանդէպ մեր վարագուրուած աչքերը բանալուդ համար:

ՍԵՐԸ ԿԸ ԳՐԱՒԷ՞ ՔԵԶ

Շարունակուածէջ 16-էն

նէդ: Վտանգի մէջ չմտնելու համար կը համաձայնիս անոր գաղափարներուն հետ, կ՚իրականացնես անոր բոլոր ցանկութիւնները: Միւս կողմէ, դիմացի անձդ կրնայ անապահով զգալ, որովհետեւ զգացականօրէն անկախ անձ մը խեղդուած կը զգայ այսպիսի յարաբերութեան մէջ, որ կը բացատրուի որպէս նարգիսական եւ զգացական կարեւոր վէրք, որ կու գայ անցեալէն եւ որուն աղբիւրը բաժանումը, սուգը, ընկճուած ծնողքի կամ ծնողքի բացակայութիւնն է առհասարակ: Դժուար եւ գրեթէ անկարելի է այս պարագային անկախանալ սորվիլ, առանց որեւէ օգնութեան:

** Եթէ պատասխաններուդ մեծամասնութիւնը (Բ) է.-*

Ձախողութեան հանդէպ վախը երբեմն կ՚ազդէ՞ յարաբերութեանդ մեկնարկին վրայ կամ յարաբերութիւն մը կը սկսիս՝ կորսնցնելո՞ւ վախով: Ամէն պարագայի, զգացական յարաբերութիւնդ մտահոգութեամբ գունաւորուած է: Տարբերութեան կը նայիս որպէս անհամաձայնութեան պատճառ եւ ոչ որպէս հարստութեան աղբիւր: Այս անգիտակից համոզումը կը հարուածէ խօսքի եւ գործի ինքնաբերաբար յառաջացած կերպը:

Յարատեւ լարուած վիճակ մը կ՚ապրիս, միշտ ուշադիր ըլլալով ուրիշին ըրածին, ինչ որ քեզ իր ներգործութիւններուն եւ ցանկութիւններուն գերին կը դարձնէ: Յանցաւորի բարդոյթէ կը տառապիս, վախնալով որ ճիշդ ձեւով չվարուեցար:

Ինքզինքիդ եւ նախասիրութիւններդ կատարելու ժամանակ տրամադրէ, ինչ որ ինքնավստահութիւնդ կ՚աւելցնէ:

** Եթէ պատասխաններուդ մեծամասնութիւնը (Գ) է.- Սիրոյ մասին գաղափարդ եւ անոր կիրարկումը կ՚ապացուցեն այն համոզումդ, որ իւրաքանչիւր կողմ ունի իր անձնական տարածութիւնը, գործունէութիւնը, բարեկամները, եւ հետեւաբար, կը պահէ իր անհատականութիւնը: Գիտես ինքզինքդ պարտադրել ոչ-յարձակողական ձեւով: Ընկերակիցիդ տարբեր ըլլալը, անոր նայուածքը, ցանկութիւնը, քննադատութիւնը եւ խրատները կը մնանեն քեզի, եւ հակառակն ալ ճիշդ է նոյնպէս, ինչ որ կը զօրացնէ անհատականութիւնդ: Կեանքիդ մէջ բոլոր առաջնահերթ կէտերը ամբողջական են, նոյնպէս է նաեւ պարագան երկրորդական հարցերուն: Վիճաբանութիւններ կան. դուք չէք խուսափիր անոնցմէ եւ զանոնք չէք շահագործեր հաշիւներ մաքրելու, այլ զանոնք կը լուծէք հասունութեամբ՝ վերլուծութեամբ եւ միջին լուծումներով:*

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆԻ մահուան տասներրորդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 27 Յունուար, 2013ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Սգակիրներ՝
Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան
Վիգէն Գուլումճեան

ՈՉ ԵՒՍ Է ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱՍԷՐ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՁՄԱՄԵԱՅ ԳՈՐԾԻՉ ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Անցնող Դեկտեմբեր 31ին կեանքէն հեռացաւ իրանահայ վաստակաշատ բանասէր, պատմաբան, աւելի քան 70 բանասիրական, պատմական գիրքերու հեղինակ Լեւոն Գ. Մինասեան: Մահը պատահած է Նոր Ջուղայի մէջ: Ծնած էր 1920 թուականին Փերիոյ գաւառի Խոյգան գիւղին մէջ:

Յուղարկաւորութիւնն ու թաղումը կատարուած է Յունուարի 8ին, Նոր Ջուղայի հայոց գերեզմանատան մէջ:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԳԷՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով, մի ոմն իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեանին: Առ այդ կը նուիրէ 200 տոլար «Մասիս»ին:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՅՈՒՇԱՐՃԱՆ
ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ
ԲԵՆԻԱՄԻՆ
ԺԱՄԿՈՉԵԱՆԻ



Սրտաբուխ նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 797-7680 կամ
(818) 429-2322 թիւերուն

Լաթակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ՚ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:

ԱՐՍԷՆ ՋՈՒԼՖԱԼԱԿԵԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿ ԼԱՒԱԳՈՅՆ ԹԻՄԸ ՇԱԽՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՒԱՔԱԿԱՆՆ Է

Աւանդոյթի համաձայն, մարզական լրագրողների հանրապետական ֆեդերացիան հարցում էր անցկացրել՝ որոշելու տարուայ 10 լաւագոյն մարզիկներին: Քանի որ 2012-ը օլիմպիական էր, ուստի կարելի էր կանխատեսել, որ հանրապետութեան լաւագոյն մարզիկների եռեակը կը կազմեն հենց Լոնտոնի ամառային օլիմպիական խաղերի մեր 3 մրցանակակիրները:

2012-ի Հայաստանի լաւագոյն մարզիկ է ճանաչուել յունահռոմէական ոճի ըմբիշ Արսէն Ջուլֆալակեանը: Հարցմանը մասնակցած 30 լրագրողների հարցաթերթիկներով Արսէնը վաստակեց բոլորից շատ՝ 294 միաւոր:

Մրցաշրջան 2012-ը իրօք յաջող էր Արսէն Ջուլֆալակեանի համար: 74 կգ քաշային ըմբիշը Եւրոպայի առաջնութիւնում դարձաւ պրոնզէ մրցանակակիր: Իսկ Լոնտոնի օլիմպիական խաղերում հայ ըմբիշը մէկը միւսի հետեւից պարտութեան մատնելով մրցակիցներին, եզրափակիչում մրցեց աշխարհի ախոյեան Ռոման Վլասովի հետ: Արսէնը մօտ էր ախոյեանի տիտղոսին, սակայն մրցակցին յաջողուեց պաշտպանուել ու վաստակած 2 միաւորը պահպանել: Ջուլֆալակեանը բաւարարուեց արծաթէ մեդալով, որը եւս մեծ նուաճում է հայ ըմբիշի համար:

Կայացած մամուլի ասուլիսում Արսէն Ջուլֆալակեանը հետեւեալը նշեց. «Շնորհակալութիւն նման պարգեւի համար: Իւրաքանչիւր մարզիկի համար մեծ պատիւ է իր երկրի լաւագոյն մարզիկ ճանաչուելը: Դրանում շնորհակալ եմ ընտանիքիս եւ մարզչիս: Սա մի մեծ թիմի քրտնաջան աշխատանքի արդիւնք է: Ինձ համար տարին գերազանց էր: Իտէալական դառնալու համար չբաւականացրեց միայն օլիմպիական ոսկէ մեդալը: Յաջող տարի էր նաեւ անձնական կեանքում՝ ամուսնացայ, ինչը շատ կարեւոր էր:

Իմ գլխաւոր նպատակն է յաջորդ տարի նուաճել աշխարհի ախոյեանի տիտղոսը: Իմ մեդալների հաւաքածուում բացակայում են միայն աշխարհի առաջնութեան եւ օլիմպիական խաղերի ոսկէ մեդալները»:

Լաւագոյն մարզիկների ցանկում 2-րդ տեղը 250 միաւորով զբաղեցրել է յունահռոմէական ոճի մէկ այլ ըմբիշ՝ մինչեւ 96 կգ քաշային Արթուր Ալեքսանեանը: Մինչեւ Լոնտոն մեկնելն Արթուրն իրեն գերազանց էր դրսեւորել Եւրոպայի առաջնութիւնում՝ նուաճելով ախոյեանի տիտղոսը: Իսկ օլիմպիական խաղերում հայ ըմբիշը դարձաւ պրոնզէ մեդալակիր՝ 3-րդ տեղի համար պայքարում գեղեցիկ ոճով յաղթելով քուպացի Էստրադա Ֆալկոնին:

Լաւագոյն եռեակը 226 միաւորով եզրափակել է ծանրորդուհի Հռիփսիմէ Խուրշուդեանը, որը Լոնտոնի օլիմպիական խաղերում 75 կգ-ից բարձր քաշայինների մրցավէճում երկամարտի 294 կգ (128+166) արդիւնքով դարձել էր պրոնզէ մրցանակակիր: Ընդ որում հայ մարզուհին իր անձնական քաշով զգալիօրէն զիջում էր միւս երկու մրցանակակրուհիներին: Ամառային 30-րդ օլիմպիադայում Հռիփսիմէն մեր մարզիկներից առաջինն էր, որ մեդալ նուաճեց:

4-րդ տեղում 203 միաւորով հայ շախմատիստների առաջատար Լեւոն Արոնեանն է, որը գլխաւորում էր Հայաստանի շախմատի տղամարդկանց հաւաքականը Ստամպուլում կայացած շախմատի համաշխարհային օլիմպիադայում: Բացի թիմային յաղթանակից, Լեւոնը մէկ ոսկէ մեդալ էլ նուաճեց 1-ին խաղատախտակի վրայ ցոյց տուած լաւագոյն արդիւնքի համար: Տարուայ ընթացքում Արոնեանը հանդէս եկաւ մի քանի ուժեղագոյն մրցաշարերում: Վերջերս Ձինաստանում կայացած մտաւոր խաղերի շախմատի մրցաշարում Արոնեանը յաղթող ճանաչուեց «կոյր» շախմատում:

131 միաւորով 5-րդ տեղը զբաղեցրել է մեր փորձառու հրաձիգ Երջանիկ Աւետիսեանը: Նրա համար տարին նշանաւորուեց տենդային հրաձգութեան Եւրոպայի ախոյեանի տիտղոսի նուաճմամբ:

6-րդ տեղում ճիւտոյիստ Յովհաննէս Դաւթեանն էր, որը վաստակել է 97 միաւոր: Նա Եւրոպայի առաջնութիւնում դարձել է արծաթէ մրցանակակիր:

7-րդ տեղը զբաղեցրել է 95 միաւոր վաստակած մեր ամենափորձառու գործող շախմատիստներից մէկը՝ Վլադիմիր Յակոբեանը: Նա եւս մեծ ներդրում ունեցաւ մեր օլիմպիական հաւաքականի մեծ յաջողութիւնում՝ 3-րդ անգամ արժանանալով ոսկէ մեդալի:

74 միաւորով 8-րդ հորիզոնականում է մարմնամարզիկ Յարութիւն Մերդինեանը: Նա մրցաշրջանում մի քանի մրցաշարերում յաջող մրցելոյթներ ունեցաւ: Ամենամեծ յաջողութեանը Մերդինեանը հասաւ Եւրոպայի առաջնութիւնում՝ նուաճելով պրոնզէ մեդալ:

68 միաւորով 9-րդ տեղում թէքուանդիստ Արման Երեմեանն է: Կազանում կայացած վարկանիշային մրցաշարում գերազանց հանդէս գալու շնորհիւ Եւրոպայի նախկին ախոյեանը Լոնտոնի օլիմպիադայի ուղեգիր էր նուաճել: Լոնտոնում նա մօտ էր մրցանակակիր դառնալուն, սակայն մարզական բախտը երես էր թեքել հայ մարզիկից, որը բաւարարուեց 5-րդ տեղով:

Լաւագոյն տասնեակը 64 միաւորով եզրափակել է Հայաստանի այս տարուայ լաւագոյն սամբիստ ճանաչուած Վաչիկ Վարդանեանը: Նա յաջող մրցելոյթներ ունեցաւ աշխարհի եւ Եւրոպայի առաջնութիւններում՝ նուաճելով համապատասխանաբար արծաթէ եւ պրոնզէ մեդալներ: Կարծում ենք, որ այս ցուցանիշով Վաչիկը 10 լաւագոյնների ցանկում պէտք է որ աւելի բարձր դիրք զբաղեցնէր:

Բացի վերը նշուած մարզիկներից, մարզական լրագրողներն իրենց հարցաթերթիկներում նշել են եւս 13 մարզիկների անուններ: Այդ ցանկում են ֆուտպոլիստներ Հենրիխ Մխիթարեանը, Յուրա Մովսիսեանը, Ռոման Բերեզովսկին, Սարգիս Յովսէփեանը, Արաս Օզբիլիսը, ազատ ոճի ըմբիշ Դաւիթ Սաֆարեանը, սամբիստներ Մխիթար Մխիթարեանը, Տիգրան Կիրակոսեանը, յունահռոմէական ոճի ըմբիշ Յուրի Պատրիկեեւը, շախմատիստներ Գաբրիէլ Սարգսեանն ու Սերգեյ Մովսիսեանը, ծանրորդ Հայկ Յակոբեանն ու բռնցքամարտիկ Նիկոլ Յարութիւնովը:

Լաւագոյն թիմ է ճանաչուել շախմատի համաշխարհային օլիմպիադայի ախոյեան Հայաստանի տղամարդկանց հաւաքականը: 2-րդ տեղը զբաղեցրել է շախմատի կանանց «Միկա» ակումբը, որը նուաճել էր Եւրոպայի ակումբային առաջնութեան փոխ ախոյեանի տիտղոսը: Լաւագոյն եռեակը եզրափակել է Հայաստանի յունահռոմէական ոճի ըմբշամարտի հաւաքականը, որը Եւրոպայի առաջնութեան թիմային հաշուարկում զբաղեցրել էր 3-րդ հորիզոնականը:

Այսօր «Օջախ» ռեստորանային համալիրում տեղի կ՚ունենայ մրցաշրջան-2012-ում աչքի ընկած մարզիկների եւ նրանց մարզիչների պարգեւատրման արարողութիւնը: Դրամական պարգեւները մարզիկներին կը յանձնի հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը: Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտէն էլ իր հերթին կը պարգեւատրի մարզիկներին ու մարզիչներին:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com